ՏՊԱԳՐՎՈՒՄ Է 2003թ ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 1-ԻՑ

ՀԱՍՑԵ՝ ք.ԿԱՊԱՆ, ՇԱՀՈՒՄՅԱՆ 20/32
ՀԵՌԱԽՈՍ՝ (0285) 5 25 63
(091) 45 90 47
(077) 06 28 02

ՀԻՄՆԱԴԻՐ ԵՎ ՀՐԱՏԱՐԱԿԻՉ «ՍՅՈՒՆՅԱՑ ԱՇԽԱՐՀ» ՍԱՀՄԱՆԱՓԱԿ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՄԲ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ
Գրանցման վկայականը՝ 01Մ 000231: Տպագրվում է «Տիգրան Մեծ» հրատարակչության տպարանում:
Հասցեն՝ ք. Երեւան, Արշակունյաց 2: Ծավալը՝ 2 տպագրական մամուլ: Տպաքանակը՝ 2000:

ISSN 1829-3468

Սյունյաց երկիր

ՉՈՐԵՔՇԱԲԹԻ
15 ՀՈՒՆՎԱՐԻ 2014թ № 1 (309)

www.syuniacyerkir.am

Մի անոպատկառ, շոռա՞յլ խրախճանք.
Ինչ որ վերին հանդուգբն օրենքով,
Մի տխմարի, մի ցոփ արարածի տրված
Աններելի, լռիշ իրավունք՝
Ուրիշների մահու եւ ժանտախտի ժամին...
ԵՂԻՇԵ ՉԱՐԵՆՑ

Կադրային ավանդույթ Սիսիանի հիվանդանոցում

ÚáÉÇ· ³ñËÇÏ-ý»á¹³É³Ï³Ý Ï³é³í³ñáõÙ

Կենսաթոշակառու, 68-ամյա Ալիսա Հովակիմյանը, ով Սյունիքի օրվա մարզպետի աներոջ քույրն է, նշանակվել է Սիսիանի պոլիկլինիկայի վարիչ՝ փոխարինելով 41-ամյա Սուսաննա Հովասափյանին, ում հրաժարականի դիմումին՝ դեռեւս չբացահայտված հանգամանքների մղումով գրված, առանց քննարկելու ընթացք է տվել հիվանդանոցի՝ մի քանի օր առաջ նշանակված տնօրենը, ով չէր հասցրել նույնիսկ ծանոթանալ հիվանդանոցի եւ հատկապես պոլիկլինիկայի ու նրա վարիչի գործունեությանը:

Զարմանալի իրադարձություններ են տեղի ունենում Սիսիանի հիվանդանոցում եւ հիվանդանոցի շուրջ: Դեռեւս 2013թ. հոկտեմբեր-նոյեմբերին Սյունիքի մարզպետարանի նախաձեռնությամբ շրջանառության մեջ դրվեց Սիսիանի հիվանդանոցի եւ Աղիտուի կայազորային հոսպիտալի միավորման թեզը. իբր հիվանդանոցը չի դիմանում կայազորային հոսպիտալի հետ մրցակցությանը, թեեւ առողջապահական այդ հաստատությունները գտնվում են իրավական ու ֆինանսական միանգամայն տարբեր հարթություններում: Առողջապահության նախարարի մի հայտարարությամբ, սակայն, հօդս ցնդեց այդ նախագիծը: Նոյեմբերի 18-ին՝ հանդիպելով «Սիսիանի բժշկական կենտրոն» ՓԲԸ-ի տնօրեն Արտյոմ Թադեւոսյանի հետ, նախարարը հավաստիացրեց՝ **«Այդպիսի խնդիր չկա ու չի եղել, դա ինչ-որ անպատասխանատու մարդկանց հնարանքն է»:**

ՇԱՐՈՒՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ՝ ԷՋ 3

Սյունիքն առաջին աշխարհամարտում

Üáñ Ñá¹í³Í³ß³ñ

Հարյուր տարի առաջ՝ 1914 թվականին, սկսեց առաջին համաշխարհային պատերազմը: Այն տեղի էր ունենում պետությունների երկու խոշոր խմբավորման՝ գերմանա-ավստրիական միավորման եւ Անտանտի միջեւ (Ֆրանսիա, Անգլիա, Ռուսաստան): Ընդհանուր առմամբ պատերազմին մասնակցում էր 33 պետություն: Պատերազմն աշխարհում ազդեցության ոլորտները վերաբաժանելու խնդիր ուներ:

Չորս տարի երեք ամիս եւ տասը օր տեւած պատերազմում (1 օգոստոսի 1914թ. - 11 նոյեմբերի 1918թ.) սպանվածների ու վերքերից մահացածների թիվը կազմեց 10 մլն մարդ: Այդքան մարդ էլ մահացավ համաճարակներից ու սովից:

Պատերազմի նախօրեին Արեւելյան Հայաստանը մտնում էր ռուսական, Արեւմտյան Հայաստանը՝ Օսմանյան կայսրության մեջ: Օսմանյան Թուրքիայում այդ ժամանակ հայերի թիվը հասնում էր 2,3 մլն-ի, Արեւելյան Հայաստանում (Ռուսահայաստանում)՝ ավելի քան 2 մլն-ի:

Առաջին համաշխարհային պատերազմը մեծագույն աղետ եղավ հայ ժողովրդի համար: Այն պատեհ առիթ էր՝ ձեռնամուխ լինելու արեւմտահայության զանգվածային տեղահանության եւ բնաջնջման ոճրապարտ ծրագրի իրագործման համար:

Արեւելյան Հայաստանից հայ բնակչության 13 տոկոսը (250 հազար հոգի) զորակոչվեց ցարական բանակ: Պատերազմ մեկնեց նաեւ տասը հազար կամավորական: Նրանց մեծ մասը մասնակցեց Կովկասյան ռազմաճակատի մարտական գործողություններին: Այդ ռազմաճակատում ծավալված գործողություններին հայ ժողովրդի ակտիվ մասնակցությունը պայմանավորված էր Արեւմտյան Հայաստանն ազատագրելու նրա վաղեմի բաղձանքով:

Սյունիքի շրջաններից եւս հազարավոր մարդիկ զորակոչվեցին բանակ, եղան նաեւ կամավորականներ: Նրանցից մոտ 800 հոգի զոհվեց կամ անհայտ կորավ, ոմանք էլ վիրավորվեցին:

Առաջին համաշխարհային պատերազմին մասնակցեցին մեր նախնիների այն սերնդի ներկայացուցիչները, ովքեր ռազմաճակատ մեկնեցին Արեւմտյան Հայաստանը թուրքական լծից ազատագրելու հույսով: Իսկ նրանք, ովքեր կենդանի մնացին պատերազմում, մասնակցեցին Սարդարապատի գոյակռվին եւ ապահովեցին հայոց անկախ պետականության վերածնունդը:

Սակայն մինչեւ հիմա մենք գրեթե ոչինչ չգիտենք այն մարդկանց մասին, որ պատմության դժվարին այդ ժամանակաշրջանում Սյունիքից մեկնեցին ռազմաճակատ: Ովքե՞ր էին նրանք, ի՞նչ ճակատագիր ունեցան...

Սյունիքի պատմության այդ հատվածն ամենաընդհանուր գծերով անգամ չի ուսումնասիրվել եւ չի ամփոփվել: Սյունիքի պատմությամբ շատ թե քիչ զբաղվողները շրջանցել են այդ թեման. կարծեք նման պատերազմ չի եղել, եւ հազարավոր սյունեցիներ չեն մասնակցել այդ պատերազ-

ՇԱՐՈՒՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ՝ ԷՋ 2

Խրախճանք ժանտախտի ժամանակ

Մարզպե՞տն է նախ մի մուշտի տվել Դովրուսի գյուղապետին, թե՞ հակառակը

îáÝ³Ï³Ý ûñ»ñÇ³ñÓ³·³Ýù

2013-14թթ. սահմանագծում Սյունիքի մարզում տեղի ունեցան մի շարք տարօրինակ ու զավեշտալի իրադարձություններ:

Իհարկե, Ամանորը տարվա այն բացառիկ տոնն է, որ, բարեբախտաբար, ուրախություն է պարգեւում ամեն մի ընտանիքի: Ամանորն այն տոնն է, որից միայն հույս, հավատ եւ լավատեսություն է ծորում: Դա այն առիթն է, որ անցնող տարվա արածն ու չարածն ամփոփելու, եկող տարվա անելիքները մտմտալու տեղիք է տալիս ինքնըստինքյան: Եվ դա հրաշալի է...

Եվ ամենեւին էլ պարտադիր չէր, որ այսօր անդրադարձ կատարեինք տոնական ու հատկապես նախատոնական օրերի անցուդարձին, բայց...

Տարվա ամփոփումներ մեզանում չկատարվեցին. տարածքային ու տեղական իշխանությունները, ըստ էության, ասելիք չունեին: Մինչդեռ շատ հետաքրքիր էր իմանալ, թե 2013-ի երկրորդ կիսամյակում ինչո՞ւ Սյունիք չբերվեց որեւէ շատ թե քիչ լուրջ ներդրումային ծրագիր, ինչը չի կարելի ասել նախորդ տարիների մասին: Ըստ էության կենտրոնական իշխանությունը հրաժարվել է Սյունիքի մարզին տրվող հավելյալ հատկացումներից՝ ենթադրելով, որ մարզը ֆինանսական լրացուցիչ ներարկումներ

ՇԱՐՈՒՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ՝ ԷՋ 5

Վահե Հակոբյանը պաշտպանական գծում

«Այն օրվանից, երբ գնացի...»

ÆÙÇçÇ ³ ÛÉáó

Հունվարի 11-ին Գորիսում՝ ՀՀԿ-ի մարզխորհրդի նախագահ Սուրեն Խաչատրյանի նախաձեռնությամբ, տեղի է ունեցել հանդիսույթ՝ նվիրված Ամանորին եւ Սուրբ ծննդին: ՀՀԿ շրջանային կազմակերպության ներկայացուցիչներից բացի հանդիսույթին մասնակցում էին համայնքների ղեկավարներ, հանրակրթական դպրոցների տնօրեններ, առողջապահական հաստատությունների ղեկավարներ, զինվորականներ, երկրապահներ, տնտեսվարող սուբյեկտների ղեկավարներ, հասարակական կազմակերպությունների եւ կուսակցությունների ներկայացուցիչներ: Հանդիսույթը, որ անցավ քաղաքի մշակույթի հիմնարկների ակտիվ մասնակցությամբ, ըստ էության, որոշակի ազդեցություն կունենա շրջանի առաջիկա քաղաքական անցուդարձի վրա: Մասնավորապես՝ տարվա առաջին կեսին տեղի կունենա Գորիսի քաղաքապետի ընտրություն, եւ, դատելով միջոցառման հանդիսավոր ու ջերմ մթնոլորտից ու մասնակիցների թվից (մոտ 300 մարդ էր մասնակցում), կարելի է ենթադրել, որ գորիսյան հանրության մեծամասնությունը թույլ չի տա քաջարանյան կլանին՝ Գորիսում ունենալու գրպանային քաղաքապետ:

Սյունիքի մարզպետարանը լուրջ ջանքեր էր գործադրել (նույնիսկ սպառնալիքներ հնչեցրել գյուղապետերի ու դպրոցի տնօրենների հասցեին) ՀՀԿ մարզխորհրդի նախաձեռնած հանդիսույթը խափանելու համար: Վահե Հակոբյանն անգամ խնդրել էր ՀՀԿ ղեկավարությանը՝ կասեցնելու Սուրեն Խաչատրյանի ձեռնարկումը: Բոլոր այդ հակաքայլերը, սակայն, արդյունք չէին տվել: Հանդիսույթին եկել էին անգամ մարզպետարանի աշխատակազմի ներկայացուցիչներ:

Ըստ հավաստի աղբյուրների՝ մոտ օրերս նմանատիպ հանդիսություններ տեղի կունենան Կապանում, Սիսիանում, Մեղրիում եւս, եթե Հակոբյանների մայրաքաղաքային հովանավորները կտրուկ քայլերի չդիմեն: Հիմա հայր Հակոբյանն իր խուրջինով շտապ պետք է հասնի Երեւան...

■

ՀՀ նախագահի հրամանագիրը

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ 2013Թ. ՊԵՏԱԿԱՆ ՄՐՑԱՆԱԿՆԵՐ ՇՆՈՐՀԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության նախագահի 2002 թվականի օգոստոսի 22-ի «Հայաստանի Հանրապետության պետական մրցանակներ հիմնելու եւ շնորհելու կարգի մասին» ՆՀ-1164-Ն հրամանագիրը եւ հաշվի առնելով պետական մրցանակների հանձնախմբերի առաջարկությունները՝ որոշում եմ.

Հայաստանի Հանրապետության 2013 թվականի պետական մրցանակներ շնորհել՝

1. Գրականության եւ արվեստի բնագավառում՝

3) կերպարվեստի ոլորտում՝ Աշոտ ԱՎԱԳՅԱՆԻՆ՝ «Մաշտոց» գեղանկարչական որմնանկարի համար (Մ.Մաշտոցի անվան հին ձեռագրերի գիտահետազոտական ինստիտուտի նորակառույց մասնաշենքի գիտաժողովների դահլիճ).

4. Հումանիտար եւ հասարակական գիտությունների բնագավառում՝ Հրաչիկ ՍԻՄՈՆՅԱՆԻՆ՝ «Ազատագրական պայքարի ուղիներում» աշխատության համար:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱԳԱՀ՝ Ս.ՍԱՐԳՍՅԱՆ
2013թ. դեկտեմբերի 29, Երեւան

ՀՀ նախագահի հրամանագիրը

ՄՈՎՍԵՍ ԽՈՐԵՆԱՑՈՒ ՄԵԴԱԼՈՎ ՊԱՐԳԵՎԱՏՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 55-րդ հոդվածի 16-րդ կետով եւ հիմք ընդունելով «Հայաստանի Հանրապետության պետական պարգեւների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքը՝ որոշում եմ.

արդյունավետ աշխատանքի համար Հայաստանի Հանրապետության սպորտի եւ երիտասարդության հարցերի նախարարի տեղակալներ Խաչիկ Մայիսի ԱՍՐՅԱՆԻՆ եւ Արսեն Ռոբերտի ՔԱՐԱՄՅԱՆԻՆ պարգեւատրել Մովսես Խորենացու մեդալով:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱԳԱՀ՝
Ս.ՍԱՐԳՍՅԱՆ
2013թ. դեկտեմբերի 29, Երեւան

Գնահատանք

Սիսիանը՝ 2013թ. «Լավագույն քաղաքային մարզական համայնք»

ՀՀ նախագահ Սերժ Սարգսյանի 2013թ. դեկտեմբերի 19-ի կարգադրությամբ, հիմք ընդունելով ՀՀ նախագահի 2004թ. մայիսի 20-ի «Ֆիզիկական կուլտուրայի եւ սպորտի բնագավառում հանրապետության նախագահի մրցանակներ հիմնելու մասին» կարգադրությունը եւ հաշվի առնելով 2013թ. հանրապետական ստուգատեսի արդյունքները, 2013թ. «Լավագույն քաղաքային մարզական համայնք» մրցանակը (2-րդ տեղ) շնորհվել է Սիսիան քաղաքային համայնքին (քաղաքապետ՝ Աղասի Հակոբջանյան):

Կրթության կառավարում

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՐՉԱՊԵՏԻ 2011 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆԻՍԻ 15-Ի N 551-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

«Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 70-րդ հոդվածի 5-րդ մասին եւ Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի հունիսի 23-ի N 975-Ն որոշման հավելվածի 8-րդ կետին համապատասխան՝

1. Հայաստանի Հանրապետության վարչապետի 2011 թվականի հունիսի 15-ի «Գորիսի պետական համալսարան» պետական ոչ առեւտրային կազմակերպության խորհրդի կազմը հաստատելու եւ Հայաստանի Հանրապետության վարչապետի 2006 թվականի հունիսի 8-ի N 405-Ա որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին» N 551-Ա որոշման հավելվածում կատարել հետեւյալ փոփոխությունները՝

1) «Հիմնադրի անունից առաջադրված խորհրդի անդամներ» բաժնում՝

ա. «Ս. Խաչատրյան - ՀՀ Սյունիքի մարզպետ» բառերը փոխարինել «Վ. Հակոբյան - ՀՀ Սյունիքի մարզպետ» բառերով,

բ. «Ա. Դոլունց - ՀՀ Սյունիքի մարզպետի տեղակալ» բառերը փոխարինել «Ա. Մարդյան - ՀՀ Սյունիքի մարզպետի տեղակալ» բառերով,

գ. «Ս. Խաչատրյան - «Որոտան ՀԷԿ-երի համակարգ» ՓԲԸ-ի գլխավոր տնօրեն (համաձայնությամբ)» բառերը փոխարինել «Տ. Կարապետյան - «Գորիս-Գամմա» ՓԲԸ-ի գլխավոր տնօրեն (համաձայնությամբ)» բառերով.

2) «Լիազոր մարմնի կողմից առաջադրված խորհրդի անդամներ» բաժնում՝

ա. «Մ.Մելիք-Բախշյան - Երեւանի Խ. Աբովյանի անվան պետական մանկավարժական համալսարանի ՈՒԳՄԳՀ-ի վարչության պետ-պրոռեկտոր» բառերը փոխարինել «Ա. Շեգունց - Գորիսի N 4 ավագ դպրոցի տնօրեն (համաձայնությամբ)» բառերով,

բ. «Ա. Ղուկասյան - ՀՀ կրթության եւ գիտության նախարարության «Հայաստանի Հանրապետության բարձրագույն որակավորման հանձնաժողովի գործակալության պետ» բառերը փոխարինել «Ա. Ղուկասյան - ՀՀ կրթության եւ գիտության նախարարության «Կրթության ազգային ինստիտուտ» ՓԲԸ-ի տնօրենի տեղակալ (համաձայնությամբ)» բառերով.

3) «Ուսանողության կողմից ընտրված խորհրդի անդամներ» բաժնում «Տ. Խաչատրյան - Գորիսի պետական համալսարանի «Պատմություն» մասնագիտության 3-րդ կուրսի ուսանող, ուսանողական խորհրդի նախագահ» բառերը փոխարինել «Ա. Բաբախանյան - Գորիսի պետական համալսարանի «Կրթության կառավարում» մասնագիտության մագիստրատուրայի 1-ին կուրսի ուսանող, ուսանողական խորհրդի նախագահ» բառերով:

Տիգրան Սարգսյան
26 դեկտեմբեր 2013, 1222 - Ա

Սյունիքն առաջին աշխարհամարտում

Üáñ Ñá¹í ³ Í ³ß ³ñ

ՍԿԻԶԲ՝ ԷՋ 1

մին:

«Սյունյաց երկիրը», պատերազմի սկսման 100-ամյակի կապակցությամբ, նպատակ ունի հավաքել պատերազմի սյունեցի մասնակիցների՝ սերունդներին թողած հուշերը, լուսանկարները, զրույցները, նամակները եւ ներկայացնել ընթերցողին: Կփորձենք պարզել նաեւ, թե պետական արխիվում, թանգարաններում ինչ է պահպանվել այդ թեմայի վերաբերյալ: Կձգտենք ի մի բերել ժամանակի մամուլի հրապարակումները, ինչպես եւ Սյունիքին ու սյունեցիներին առնչվող նյութերը, գիտական հետազոտությունները:

Մենք ակնկալում ենք, որ մարզի բնակիչները, ովքեր ունեն համապատասխան տեղեկություններ եւ նյութեր, կհամագործակցեն թերթի խմբագրության հետ եւ իրենց ձեռքի տակ եղածը կուղարկեն խմբագրություն: Գյուղապետարանների եւ քաղաքապետարանների օգնությամբ հնարավոր է վերականգնել այն մարդկանց անունը, ովքեր (ըստ համայնքների) մասնակցել են առաջին համաշխարհային պատերազմին:

Սիրելի հայրենակիցներ, ձեր օգնությամբ կարող ենք 2014 թվականին ինչ-որ չափով ուրվագծել առաջին աշխարհամարտին Սյունիքի, սյունեցիների մասնակցության տարեգրությունը:

Նախապես շնորհակալություն ենք հայտնում աջակցության եւ համագործակցության համար:

«ՍՅՈՒՆՅԱՑ ԵՐԿԻՐ»

Ê áëù ÑÇß³ï³ÏÇ



Լեւոն Խեչոյան

2014թ. հունվարի 8-ին մահացավ գրող Լեւոն Խեչոյանը: Նա բուժման նպատակով հոկտեմբերի կեսից գտնվում էր Գերմանիայում, որտեղ վիրահատության էր ենթարկվել, սակայն վիճակը գնալով վատացել էր եւ վերջերս նրան անկողնային վիճակում տեղափոխեցին Հայաստան:

Ծնվել է Վրաստանի Ախալքալաքի շրջանի Բարալեթ գյուղում: 1983թ. ավարտել է Լենինականի մանկավարժական ինստիտուտի բանասիրական ֆակուլտետը: 1987-ից ապրում էր Կոտայքի մարզի Հրազդան քաղաքում: 1989-1994թթ., «Սասուն» կամավորական ջոկատի կազմում, մասնակցել է Ղարաբաղյան ազատագրական պատերազմին: Գրել սկսել է դպրոցական տարիներից: 1988-ից նրա ստեղծագործությունները տպագրվում են հանրապետական մամուլում: Ստեղծագործությունների անդրանիկ ժողովածուն լույս է տեսել 1991-ին՝ «Խնկի ծառեր» վերնագրով:

Լեւոն Խեչոյանի պատմվածքները թարգմանվել են ռուսերեն, ուկրաիներեն: 1994-ից սկսած պարբերաբար տպագրվում է «Լիտերատուրնայա գազետա» թերթում, «Դրուժբա նարոդով», «Լեպտա» ամսագրերում: 1998թ. տպագրվել է «Լիտերատուրնայա Ուկրաինայում»:

1995թ. լույս են տեսել Լեւոն Խեչոյանի «Արշակ արքա», «Դրաստամատ ներքինի» պատմավեպերը:

Լեւոն Խեչոյանի գործերն այժմ թարգմանվում են անգլերեն եւ այլ լեզուներով:

«Սեւ գիրք, ծանր բզեզ» վեպի համար 1999թ. արժանացել է ՀՀ պետական գրական «Ոսկե եղեգն» մրցանակի:

2013թ. մայիսին նա հրաժարվեց «Հայրենիքին մատուցած ծառայությունների համար» 2-րդ աստիճանի մեդալից՝ նկատի ունենալով երկրի ներքաղաքական կյանքում առաջացած մի քանի մտահոգիչ հարցերի առկայությունը:

Լեւոն Խեչոյանը «Սյունյաց երկրի» բարեկամներից էր: Դեռեւս 2006թ. մայիսի 22-ին, երբ թերթը գտնվում էր շրջափակման մեջ, նա ժամանեց Սյունիք՝ «Սյունյաց երկրի» որպիսությամբ հետաքրքրվելու, թերթի խմբագրակազմին, թերթի առջեւ ծառացած խնդիրներին ու ստեղծագործական ընթացքին ծանոթանալու, լրագրողներին քաջալերելու հատուկ առաքելությամբ: Խմբագրատանը տեղի ունեցավ հանդիպում՝ թերթի բարեկամների մասնակցությամբ, որի ընթացքում հնարավոր եղավ ծանոթանալ նաեւ նրա ստեղծագործություններին, գրականագիտական հայացքին: Հետագայում այդ բարեկամությունն ու համագործակցությունն ավելի խորացան:

2013թ. հոկտեմբերին, Գերմանիա բուժման գնալուց մի քանի օր առաջ, նա շնորհավորական ուղերձ հղեց «Սյունյաց երկրին»՝ պարբերականի հիմնադրման 10-ամյակի կապակցությամբ, որը տպագրվեց թերթի հոբելյանական համարում: Նրա ուղերձը ոգեշնչող էր եւ պարտավորեցնող: Ահա՝ **«Որոշ իշխանավորներ պատկերացում կամ պատրանք են ստեղծում, թե Սյունիքը, եւ թե մասնավորապես Գորիսը, Կապանը, Մեղրին, Սիսիանը կկարողանային կայանալ, եթե քաղաքական իշխանության մեջ անգամ չլիներ խիզախների «Սյունյաց երկիր» թերթի ոգու իշխանությունը:**

Կարելի է գեղեցիկ խոսքեր շռայլել թերթին, միայն այն բանի համար, որ ամենածանր պատերազմական տարիներից սկսած՝ ցրտին, շոգին, մթին, սովին դիմակայել է ուժեղի խոսքով, ժողովրդի հետ ոտ-ոտ առաջ է գնացել: Համարձակություն է ունեցել վայրի մեղվի պես դառը խոսք ասել ներքին թշնամիներին, որոնք անձնական շահը Սյունիքի շահից բարձր են դասել:

Այսպես բացեիբաց գովեստով եմ խոսում այս թերթի մասին, որովհետեւ նրա բոլոր խիզախ աշխատակիցներին ճանաչում եմ: Խիզախ եմ ասում, որովհետեւ մի անգամ երեկոյան երկար, շատ երկար խոսում էինք այն մասին, թե ինչպես են լեռան կողքին՝ նրա խոռոչներում ձայն տվող վայրի քամուն լսելով իրենք մեծացել, եւ թե մեր պատմության ընթացքում ինչպես էր հնչել եւ զրնգացել Խուստուփ լեռը»: Նա նաեւ հետաքրքրվեց, թե երբ է տեղի ունենալու թերթի հոբելյանին նվիրված հանդիսությունը: Մեր պատասխանը միանշանակ էր՝ **«Մինչեւ չվերադառնաք, մենք որեւէ հանդիսություն չենք կազմակերպի»:** Նա խոստացավ վերադառնալ եւ անպայման մասնակցել թերթի հոբելյանին, բայց ավա՜ղ…

«Սյունյաց երկրի» խմբագրակազմը խորապես վշտացած է իր մեծ բարեկամի վաղաժամ մահվամբ եւ ցավակցում է նրա հարազատներին ու մերձավորներին:

Թող խաղաղություն եւ լույս իջնի նրա շիրմին:

¶Ý³Ñ³ï³Ýù

Հրանտ Մաթեւոսյան



Հայ ընթերցողի համար Լեւոն Խեչոյանի հայտնությունը իրական պարգեւ է: Կարդում եմ նրա գործն ու հաճախ երանի եմ տալիս նրան. բաներ, որ ես էի կռահում, միայն կռահում էի, իր համար այբուբեն են. բաներ, որ ես հրճվանքով որպես գյուտ էի անելու, իր համար սովորական իրողություններ են: Կյանքը գիտի եւ գիտի՝ գրականությունն ինչ է:

Մեր դժվար, ինչ-որ տեղ նույնիսկ հակագրական պայմաններում իր ճշմարիտ էջերը շարադրել է: Լավ արձակագիր է գալիս, աշխատում է, իր հացը գրականությամբ է վաստակում, քաջ տղա է, մարմինը նույնպես պինդ, եւ ես վստահ եմ, որ այսօր եւ վաղը մեր գրականությունը նրանով է շարունակվելու: Նշանակում է՝ մեր մշակույթի վերջը չի եւ հակառակը՝ գրականությունը մի լավ ժամանակի առաջին օրերն է ապրում:

Հրաչյա Թամրազյան

Լեւոն Խեչոյանի գրականությունն անավարտ շարունակական մի բնագիր է, որ նա տարի առ տարի, հատված առ հատված հանձնում է ընթերցողներին: Բնագիր, որ ներփակել է իր մեջ անձնավորված հղացումները, իր հերոսներին, որոնցից հեղինակը մեծ դժվարությամբ է բաժանվում, այնքան են նրանք ապրված եւ կենդանի: Վերամարմնավորման այս ձիրքը Լեւոն Խեչոյանի արձակում հասնում է անօրինակ խորքերի: Նա իր հերոսներին սիրում է «անպաշտպան» սիրով, քանի որ նրանք խոցելի են ու դյուրաբեկ, անցողիկ ու ողբերգական կյանքի նման: Իր հերոսներին նա տեղակայում է կյանքի անցահուներում, խորքերում եւ մակերեսին, բնության հեռապատկերում, մոտեցնում եւ հեռացնում է իբրեւ ներքին նյութ, տնտղելու եւ իմաստասիրելու առարկա, իբրեւ ներքին իմաստ ու շարժում, միացնում ու տրոհում է նրանց, հետո մի պահ կանգ է առնում եւ ծնկաչոք խոստովանում իր անսքող, մորեմերկ սերն ու գութը նրանց հանդեպ, ութվում է, թե խախտվում է պատումի ներքին տրամաբանությունը եւ հոգեբանությունը, անխառն զգացմունքայնություն հաղորդելով նրան, մինչդեռ իրականում խոսքը պայծառանում ու կենդանանում է՝ շնչավորելով հերոսներին ու նրանց շրջապատող իրերի աշխարհը:

«Օբյեկտիվ» պատումին ահա այստեղ միանում է սուբյեկտիվ պատումը, ինքնախոստովանանքի ժանրին հատուկ ողբերգական շեշտադրումներով եւ հնչերանգներով օժտելով նրա արձակը:

Նա փորձում է մինչեւ վերջ գնալ մարդկային հոգու, նրա կյանքի «աստվածային առնչակցության» պատմության ոլորաններով ու բավիղներով եւ յուրովի ընթերցել այդ «մայր բնագիրը», նրան տանջում են գոյության մեծ առեղծվածները, կյանքի ահեղ հարցականները: «Հավերժական կորստի» այդ մենանվագները նա շաղախում է մարդկային խտանյութով:

Որտեղի՞ց է ցավի այդ հանգույցը, ինչո՞ւ է այդքան ավերիչ գոյության այդ խտացումը եւ ինչ է կյանքը՝ բնության այդ վայրկենական բռնկումը, հանուն ինչի՞ են շիթարձակում վայրի հրճվանքի ու մենության այդ մեղեդիները:

Հեղինակը վստահում է խոսքի, պատկերի մոգական, ինքնակա ուժին, փորձում է սանձել տեսիլքները ցնորամտության ու խենթության սահմանին եւ խզման այդ եզրին տեղակայում եւ ապրեցնում է իր հերոսներին: Մարդկային «վաղնջական» խենթությունն է գրողի նյութը: Հավերժական այդ «խենթն է» նրա հերոսը, կենսապատումի նրա ձեւը, որ ընթանում է մերթ խորքային բխումներով իբրեւ հուզազեղության պահեր, մերթ էլեգիկ հոսքերով: Հարափոփոխ, հարաշարժ, բայց եւ միեղեն այդ խորքում ոլործուն գալարքներ են, բռնկումներ, ճյուղավորումներ, փոխկանչեր եւ արձագանքներ, որ խոսքի խարազանով ռիթմավորում են նրա արձակը: Գրողը պահպանել է խոսքին մերձենալու իր նախնական հրճվանքը, որին ապավինելով՝ փորձում է թափանցել բնության հյուսվածքներից ու խորիսխներից ներս, ուր կյանքի զորեղ բնազդներն ու մղկներն են խմորվում: Այս խտացումներն, ահա, փոքր ժանրի գործերում ան գամ տարածականություն ու խորք են տալիս նրա պատումին:

Մայր խոսքի բանված-քի վրա հեղինակը նշողում է գոյության ահեղ կեռմաններ, ճակատագրական հանգույցներ, որ խտանում, ահագնանում են, թվում է, այդ ամենին անհաղորդ. հավերժական նինջի ու թմբիրի մեջ ներհայեցող բնության խորքում:

Որտե՞ղ է «ներքին բնագիրը», որտե՞ղ է այդ թաքուն տեքստային կապը նրա հետ, թվում է զուգադիր երկու տեքստ են հոսում՝ մարդու եւ մարդկայինի, եւ բնության մասին, որոնք հետո, պատումի վերջում, իբրեւ միասնական ասք միախառնվում են, բառը խոնարհվում է բնության հավերժական խորհրդի առջեւ, երբ նոր պատումների սաղմերը դեռ քնած են նրա կախարդական բոժոժներում:

Բառի ողբերգական, «այնկողմնային» այդ խփոցը, որ ներհատուկ է Լեւոն Խեչոյանի արձակին, մարդասիրության եւ բնապաշտության նոր ակոսներ է բացում մեր արձակում՝ դառնալով նրա տոհմիկ ժառանգության նորագույն խտացումը:

Կադրային ավանդույթ Սիսիանի հիվանդանոցում

ú ÈÆ¶²ðÊÆÎ-ü º à¸²È²Î²Ü Î²è²ì²ðàõØ

ՍԿԻԶԲԸ՝ ԷՋ 1

Սիսիանի հիվանդանոցի շուրջ այդ օրերին տեղի ունեցող իրադարձությունները, ինչպես ժամանակին նկատել էր «Սյունյաց երկիրը», իրականում գավառական պարզունակ խաղեր էին եւ նպատակ ունեին թափուր դարձնել հիվանդանոցի տնօրենի աթոռը՝ մարզին պատուհասած օլիգարխիկ-ֆեոդալական կառավարման սիսիանյան սպասավորներից մեկի ուշացած վերահառնումին ծառայեցնելու համար: Դա հատկապես ակնհայտ դարձավ այն բանից հետո, երբ տապալվեց հիվանդանոցն ու հոսպիտալը միավորելու ցնորական գաղափարը:

Եվ ահա օրերից մի օր Սյունիքի փոխմարզպետ Աշոտ Մարդյանը, ստանձնելով սովորական հրահանգչի դեր, զանգահարում է Արտյոմ Թադեւոսյանին եւ հաղորդում՝ «Մարզպետն ասում է՝ դիմում գրիր աշխատանքից ազատվելու համար, ինքը չի ուզում քեզ հետ աշխատել»: Արտյոմ Թադեւոսյանը փորձում է ճշտել՝ «Իսկ ինչո՞ւ չի ուզում ինձ հետ աշխատել»: Փոխմարզպետը պատասխանում է. «Չգիտեմ, ինձ ասել է՝ զանգահարիր՝ ես էլ զանգահարել եմ»:

Արտյոմ Թադեւոսյանը հրաժարվեց դիմում գրել՝ պատասխանելով. «Քեզանից մարզպետ կստացվի, իսկ ինձանից հիվանդանոցի տնօրեն չի՞ ստացվի»: Ի վերջո, սակայն, նա ընկրկեց եւ 2013թ. դեկտեմբերի 9-ին հրաժարականի դիմում գրեց: Արտյոմ Թադեւոսյանը միգուցե եւ չընկրկեր ու դիմում չգրեր, եթե այդ օրերին Սիսիանի հիվանդանոցի շուրջ չբռնկվեր մի տհաճ սկանդալ, թեեւ ինքը պատահարի օրը Սիսիանում չէր եւ ուղղակի կապ չուներ տեղի ունեցածի հետ: Վարդան Գեւորգյանին վիրահատելու ժամանակ, ըստ հավաստի տեղեկությունների, կոտրվել էր վիրահատական սեղանը, հիվանդն ընկել էր գետնին՝ դրանից բխող բոլոր հետեւանքներով: Երեւան տեղափոխելուց հետո անգամ հիվանդի կյանքը փրկել չի հաջողվել: Վարդան Գեւորգյանի մահվան հանգամանքների ուսումնասիրմամբ հիմա իրավապահներն են զբաղվում: Հանգուցյալը նախ՝ Վահե Հակոբյանի, ապա՝ Հերմինե Նադալյանի քարի արդյունահանման եւ մշակման ձեռնարկության պատասխանատուներից էր: Ուստիեւ միջադեպն առաջ էր բերել նշված չինովնիկների զայրույթը:

Արդյունքում իրագործվեց ամիսներ առաջ մոգոնված ծրագիրը՝ Արտյոմ Թադեւոսյանը պաշտոնանկ արվեց (տարիների նրա վաստակը, մինչդեռ, բարձր գնահատեց ՀՀ առողջապահության նախարարը եւ 2013թ. դեկտեմբերի 16-ին Արտյոմ Թադեւոսյանին նշանակեց նախարարության հիվանդանոցային բժշկական օգնության եւ սպասարկման քաղաքականության բաժնի պետ): Նոր տնօրեն նշանակվեց Լեւոն Մանասյանը, ով ծագումով Սիսիանից է, բայց Սիսիանում չի աշխատել գրեթե: Նոր տնօրենի թեկնածությունը, ըստ Սիսիանում իշխող կարծիքի, առաջադրել է մարզպետի աները՝ Գառնիկ Հովակիմյանը:

Ամեն ինչ, սակայն, դրանով չավարտվեց: Նոր տնօրենի պաշտոնա-

ՇԱՐՈՒՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ ԷՋ 5

Ð»ï ³ ¹ ³ ñÓ Ñ ³ Ù ³ óù

2013 թվականը Սյունիքում.
ուշագրավ իրադարձություններ

■ Հունվարի 12-ին հանդիսավոր պայմաններում նշվեց Կապանի բրիգադի կազմավորման 20-րդ տարեդարձը:

■ Տարվա առաջին կեսին հայ հանրությունը քննարկում էր Սյունիքի արոտավայրերը պարսիկ խաշնարածներին տրամադրելու հարցը: Քննարկումն ավելի ակտիվացավ հունվարի 14-ից հետո, երբ երկօրյա այցով, Արեւելյան Ատրպատականի նահանգապետի հրավերով, Թավրիզ այցելեց Սյունիքի մարզի պատվիրակությունը: Հունվարի 15-ին Թավրիզում Արեւելյան Ատրպատականի եւ Սյունիքի մարզի միջեւ ստորագրվեց չորս համաձայնագիր, որոնք հանրության ճնշումների ներքո կյանքի չկոչվեցին:

■ Ամբողջ տարվա ընթացքում շարունակվեցին դատական ու նախաքննական գործընթացները 2010թ. օգոստոսի 28-ին Քաջարանում Գրիգոր Պապյանի սպանության գործի շուրջ: Ձերբակալվեցին մարզի իրավապահ համակարգի որոշ ղեկավարներ, ոմանք էլ պաշտոնանկ արվեցին: Իսկ դատաքննությունն այդպես էլ վերջնական հանգրվան չհասավ:

■ Հունվարի 22-ին, ՀՀ նախագահ Սերժ Սարգսյանի մասնակցությամբ, տեղի ունեցավ Գորիսի «ֆրանս-հայկական սրտաբանական կենտրոնի» բացումը:

■ Հունիսի 1-ին Սյունիքի մարզպետի Գորիսի առանձնատան մոտ տեղի ունեցավ ողբերգական միջադեպ. ստացած հրազենային վնասվածքներից տեղում մահացավ «Վարարակն» ՓԲԸ տնօրեն Ավետիք Բուդաղյանը:

■ Հունիսի 6-ին ՀՀ կառավարությունը Սուրեն Խաչատրյանին ազատեց Սյունիքի մարզպետի պաշտոնից՝ իր դիմումի համաձայն: Սուրեն Խաչատրյանը հունիսի 3-ին էր դիմել ՀՀ կառավարություն: Դիմումում մասնավորապես ասված էր՝ «Ցավում եմ, որ չէի կարող ու չկարողացա կանխել իմ առանձնատան մոտ տեղի ունեցած ողբերգական միջադեպը: Ես որոշել եմ թողնել մարզպետի իմ լիազորությունները մինչեւ նախաքննության ավարտը»:

■ Հունիսի 7-ին նշվեց Կապանի Արամ Խաչատրյանի անվան երաժշտական դպրոցի 60-րդ տարեդարձը:

■ ՀՀ կառավարության հուլիսի 10-ի որոշմամբ Սյունիքի մարզպետ նշանակվեց Վահե Հակոբյանը: Նրան նշանակելու մասին հուլիսի 4-ին որոշում էր ընդունել ՀՀԿ գործադիր մարմինը: Դրանից մի քանի օր առաջ նորանշանակը հայտարարել էր, որ ինքը երբեք չի զբաղեցնի մարզպետի արյունոտ աթոռը:

■ Հուլիսի 20-ին, վերջին 1700 տարվա ընթացքում առաջին անգամ, Կապանում՝ քրիստոնեական կարգին հակառակ, տեղի ունեցավ արարողություն շարիաթի օրենքով:

■ Օգոստոսի 16-ին Գետաթաղի Եղիա մարգարեի անունը կրող սրբավայր-սարագագաթին օծվեց նորածագ խաչը:

■ Սիսիանը ճանաչվեց ՀՀ առաջին երիտասարդական մայրաքաղաք: Այդ տիտղոսը քաղաքը կկրի 2014 թվականի ամբողջ ընթացքում: Սիսիանն այդպիսի ճանաչման արժանացավ ՀՀ սպորտի եւ երիտասարդության հարցերի նախարարության կողմից հայտարարված մրցույթում՝ օգոստոսի 31-ին:

■ Փետրվարի 18-ին տեղի ունեցավ ՀՀ նախագահի ընտրություն: Այդ նպատակով հունվարի 22-23-ին Սյունիք էր այցելել Սերժ Սարգսյանը: Քվեարկության արդյունքներով նա մարզում ստացավ քվեների 65,10 տոկոսը, Ռաֆֆի Հովհաննիսյանը՝ 31,85 տոկոսը: 902 ձայն ստացավ Հրանտ Բագրատյանը, 587 ձայն՝ Պարույր Հայրիկյանը, 239 ձայն՝ Անդրիաս Ղուկասյանը, 129 ձայն՝ Արման Մելիքյանը, 281 ձայն՝ Վարդան Սեդրակյանը: Այդուհանդերձ մարզկենտրոն Կապանը մերժեց Սերժ Սարգսյանին. նրա օգտին քվեարկեց 7274 հոգի (42,1 տոկոս), Ռաֆֆի Հովհաննիսյանի օգտին՝ 9375 հոգի (54,3 տոկոս): Գործող նախագահը մերժվեց նաեւ մարզի մի քանի գյուղերում: Սիսիանում եւ Քաջարանում էլ Սերժ Սարգսյանը Ռաֆֆի Հովհաննիսյանին հաղթեց աննշան առավելությամբ: Փետրվարի 27-ին, մարտի 10-ին եւ ապրիլի 1-ին Կապանում տեղի ունեցան հետընտրական հանրահավաքներ՝ կազմակերպված Ռաֆֆի Հովհաննիսյանի կողմից:

■ Հոկտեմբերին նշվեց Կապանին քաղաքի կարգավիճակ շնորհելու 75-ամյակը: «Կապան քաղաքի օր» տոնական միջոցառումների վերջին ակորդները հնչեցին հոկտեմբերի 19-ին:

■ Սիսիանի վոլեյբոլիստուհիների թիմը («Սյունիք» կանանց թիմը) չորրորդ անգամ դարձավ Հայաստանի չեմպիոն (մարզիչ՝ ՀՀ ֆիզկուլտուրայի վաստակավոր աշխատող Աղվան Հակոբյան):

■ Իտալիայում անցկացված 18-19 տարեկանների Եվրոպայի աթլետիկայի առաջնության եռացատկ մարզաձեւում 16 մ 01 սմ արդյունքով Եվրոպայի չեմպիոն դարձավ կապանցի Լեւոն Աղասյանը:

■ Մայիսի 29-ին Մեղրիում տեղի ունեցավ ստորագրահավաք. 2382 հոգի դեմ արտահայտվեց Մեղրու տարածաշրջանում նոր հանքավայրերի շահագործմանը:

■ Հունիսի 29-ին վերաօծվեց Քաջարան գյուղի Սբ Հակոբ եկեղեցին:

■ Հայաստանում տեղական ինքնակառավարման համակարգի ներդրման 17-ամյակի կապակցությամբ նոյեմբերի 10-ին տարվա մշակութային լավագույն քաղաքային համայնք ճանաչվեց Գորիս քաղաքը:

■ Օգոստոսի 31-ին ՀՀ վարչապետ Տիգրան Սարգսյանի մասնակցությամբ տեղի ունեցավ Տեղի N1 միջնակարգ դպրոցի նորակառույց շենքի բացումը:

■ Սեպտեմբերի 13-ին Կապանում ծնունդ առավ «Վերադարձ» երիտասարդական հասարակական շարժումը (հիմնադիրներ՝ Դավիթ Սիմոնյան, Արսեն Մարտիրոսյան):

■ Սեպտեմբերի 23-ին նշվեց Մեղրու շրջանի Շվանիձոր գյուղի միջնակարգ դպրոցի հիմնադրման 130-ամյակը:

■ Սեպտեմբերի 25-26-ին Սյունիքում էր գտնվում ՀՀ նախագահ Սերժ Սարգսյանը:

■ Սեպտեմբերի 29-ին Գորիսում ավանդական համաքաղաքային տոն էր, որի ընթացքում վերաօծվեց Սբ Հռիփսիմե եկեղեցին:

■ Սեպտեմբերի 26-ին տեղի ունեցավ Քաջարանին շրջանային ենթակայության քաղաքի կարգավիճակ շնորհելու 55-ամյակին նվիրված տոնակատարություն, որին մասնակցում էր ՀՀ նախագահը:

■ Սեպտեմբերի 29-ին N38 մեծամասնական ընտրատարածքում տեղի ունեցավ Աժ պատգամավորի լրացուցիչ ընտրություն: Ոչ մրցակցային այդ ընտրությունում Աժ պատգամավոր նշանակվեց Արմեն Կարապետյանը:

■ Հոկտեմբերի 12-ին նշվեց Կապանի Եղիշե Չարենցի անվան N13 հիմնական դպրոցի 30-ամյակը:

■ Հոկտեմբերի 20-ին Ագարակ քաղաքում նշվեց տեղի գնդի հիմնադրման 20-ամյակը:

■ Նոյեմբերի 11-13-ը Կապանում անցկացվեց համաժողով՝ նվիրված Սյունիքի մարզի տնտեսության ոչ լեռնահանքային հատվածում ներդրումային հնարավորություններին:

■ Նոյեմբերի 18-ին իր դիմումի համաձայն աշխատանքից ազատվեց Սյունիքի մարզի դատախազ Նորայր Հակոբյանը, ով այդ պաշտոնը ստանձնել էր մոտ մեկ տարի առաջ՝ 2012թ. նոյեմբերի 7-ին: Մարզի դատախազ նշանակվեց Արմեն Աֆանդյանը, ում ներկայացնելու համար դեկտեմբերի 9-ին Սյունիք այցելեց ՀՀ գլխավոր դատախազ Գեւորգ Կոստանյանը:

■ Նոյեմբերի 19-ին մարզում արձանագրվեց աննախադեպ իրադարձություն. Միքայել Օհանյանը ցած դրեց Մեղրի համայնքի ավագանու անդամի լիազորությունները՝ դրանով իսկ անհամաձայնություն հայտնելով Մեղրի քաղաքի ներսում փոքր հէկ կառուցելու նախաձեռնությանը, ինչպես եւ շրջանում իրականացվող հանքարդյունաբերական քաղաքականությանը:

■ Դեկտեմբերի 11-ին, կյանքի 58-րդ տարում, մահկանացուն կնքեց Գագիկ Աթաջանյանը: 1996, 1999, 2002 եւ 2005 թվականներին նա, ինչպես ինքն էր հայտարարում, ընտրվել էր Կապանի քաղաքապետ, սակայն վերջին երկու հաղթանակը, դատարանի կայացրած վճռի ուժով, նրանից խլվեց: Գագիկ Աթաջանյանն անկախության շրջանի կապանյան իրականության ամենանշանավոր դեմքերից էր եւ մինչեւ կյանքի վերջ վայելում էր հայրենակիցների բացառիկ սերն ու հարգանքը:

■ Տարեվերջին տարօրինակ զարգացումներ տեղի ունեցան «Որոտանի հէկերի համալիր» ՓԲ ընկերության շուրջ: Նախ հայտարարվեց, որ ընկերությունը 180 մլն դոլարով վաճառվում է ամերիկյան «Կոնտուր գլոբալ» ընկերությանը, այնուհետեւ կառավարությունը վերանայեց վաճառքի պայմանները...

■ Տարվա ընթացքում մարզի բնակչությունը պակասեց 11 հազարով կամ 7,3 տոկոսով:

Կադրային ավանդույթ Սիսիանի հիվանդանոցում

▙ úÉÇ · ³ñËÇÏ-ý»á¹ ³É³ Ï ³Ý Ï ³é³ í ³ñáõÙ

ՍԿԻԶԲԸ՝ ԷՋ 3

վարման առաջին տասնօրյակը դեռ չբոլորած, առայժմ անհայտ հանգամանքների մղումով, աշխատանքից ազատվելու դիմում է գրում պոլիկլինիկայի վարիչ, 41-ամյա Սուսաննա Հովասափյանը: Տնօրենն էլ, դեռեւս ծանոթ չլինելով հիվանդանոցի եւ հատկապես պոլիկլինիկայի գործերին, առանց քննարկելու դիմումը, առանց դիմումի պատճառի մեջ խորանալու, առանց աչք թարթելու համաձայնություն է տալիս եւ պոլիկլինիկայի վարիչին ազատում իր պարտականություններից:

Ի դեպ, Սուսաննա Հովասափյանը Սիսիանում բարեխիղճ աշխատողի, պոլիկլինիկական ծառայության լավ կազմակերպչի ու հմուտ մանկաբույժի համբավ ունի: Երեքուկես տարվա պաշտոնավարման ընթացքում հասցրել էր ճանաչում ձեռք բերել նաեւ մարզի բուժաշխատողների շրջանում:

41-ամյա Սուսաննայի փոխարեն պոլիկլինիկայի վարիչ է նշանակվել կենսաթոշակառու, 68-ամյա Ալիսա Հովակիմյանը, ով մարզպետի աներոջ քույրն է, ում հասակակիցները վաղուց են հիվանդանոցը թողել՝ իրենց տեղը զիջելով երիտասարդներին:

Իհարկե, մարզպետի աներոջ քույրն էլ կարող է պետական պաշտոն զբաղեցնել: Իհարկե, իրավական առումով որեւէ խախտում չի կատարվել. օրենքը չի արգելում, որ 68-ամյա մեկն աշխատի փակ բաժնետիրական ընկերությունում: Բայց արդյո՞ք դա պատշաճ է բարոյական ու պրոֆեսիոնալ տեսակետից: Արդյո՞ք դա պրոտեկցիայի սովորական դրսեւորում չէ, ինչից անբուժելի հիվանդ է մեր պետականությունը: Արդյո՞ք Ալիսա Հովակիմյանը կնշանակվեր պոլիկլինիկայի վարիչ, եթե չլիներ մարզպետի տիկնոջ հորաքույրը: Արդյո՞ք Սիսիանի հիվանդանոցում երիտասարդ մասնագետներն այլեւս հարգի չեն: Մի՞թե մարզպետին, ով պատասխանատու է մարզի առողջապահական համակարգի համար, չի անհանգստացրել, թե ինչու Սիսիանում 41-ամյա Սուսաննա Հովասափյանը, ունենալով աշխատանքի փորձ եւ լավ մասնագետի ու կազմակերպչի համբավ, դիմում է գրում եւ աշխատանքից հեռանում:

Անշուշտ, երբեմնի շրջանային հիվանդանոցները փակ բաժնետիրական ընկերություն են՝ դրանից բխող որոշ առանձնահատկություններով, բայց չպետք է մոռանալ՝ մեր երկիրը որդեգրել է մի քաղաքականություն, որ 63 տարեկանից մարդիկ անցնում են կենսաթոշակի եւ չեն կարող լինել քաղծառայող, համայնքային ծառայող, ՊՈԱԿ-ի տնօրեն եւ այլն: 63 տարեկանից հանրակրթական դպրոցի ուսուցչին (թեեւ դա օրենքի պահանջ չէ) տուն են ուղարկում՝ երիտասարդների ուժերն օգտագործելու համար: 63 տարեկանից բուժաշխատողին նույնպես տուն են ուղարկում (թեեւ դա էլ օրենքի պահանջ չէ): Անձամբ մենք դեմ ենք այդ մոտեցումներին, քանզի 63 տարեկան ուսուցչի, բժշկի, տնօրենի փորձն ազգային հարստություն ենք համարում, մանավանդ որ կադրային մեր ռեսուրսը տարեցտարի աղքատանում է, բայց ի՞նչ արած, երբ երկիրն այդ ճանապարհն է ընտրել…

Պրոտեկցիոն դրսեւորումները, սակայն, Սիսիանի հիվանդանոցում չավարտվեցին պոլիկլինիկայի վարիչի աթոռը զավթելուց հետո ան գամ: Տարեվերջին էլ Սիսիանի հիվանդանոցի իրավաբան նշանակվեց Գառնիկ Հովակիմյանի (մարզպետի աներոջ) սանիկը՝ պետհամալսարանի իրավաբանականի հեռակա բաժնի ուսանող ոմն Միրո Հովհաննիսյան: Ընդ որում՝ Սիսիանի հիվանդանոցի 2013թ. հաստիքացուցակում նման միավոր չկար: Առհասարակ մարզի ոչ մի հիվանդանոցում մինչեւ հիմա նման հաստիք չենք ունեցել: Իսկ եթե հիվանդանոցի հիմնադիրը՝ Սյունիքի մարզպետը, փոփոխել է հաստիքացուցակը եւ իրավաբանի հաստիք տվել Սիսիանի հիվանդանոցին (ինչի իրավունքն ունի), ապա խտրություն է դրել մարզի հիվանդանոցների միջեւ: 35-40 մահճակալով հիվանդանոցին իրավաբանի հաստիք հատկացնողը պետք է առնվազն հիշեր, որ մոտ յոթ անգամ մեծ Կապանի հիվանդանոցը, մոտ չորս անգամ մեծ Գորիսի հիվանդանոցը նման հաստիք չունեն:

Հիմա ամփոփենք ասվածը: Կշարունակի՞ Գառնիկ Հովակիմյանը կադրային փոխատեղումներ կատարել Սիսիանի հիվանդանոցում, թե՞ ոչ: Սիսիանի հանրությանը եւ հատկապես բժիշկներին մտահոգող այդ հարցի պատասխանը ստանալուց առաջ կուզենայինք մի իրողություն արձանագրել: Գառնիկ Հովակիմյանը Սիսիանի առաջին քաղաքապետն է եւ ժամանակին որոշակի դրական դեր է խաղացել համայնքային կյանքի կազմակերպման գործում, վայելել եւ վայելում է որոշակի հեղինակություն: Վերջին տարիներին քանիցս մեղադրել է Սիսիանի իշխանություններին՝ ոչ կոմպետենտության, կամայականության մեջ: Բայց այսօր, օգտագործելով իր ընտանեկան-խնամիական դիրքը, օգտագործելով օրվա մարզպետի՝ իրավիճակին չտիրապետելու անվիճելի իրողությունը, անհարկի միջամտություն է անում առողջապահական համակարգի գործերին, ինչ մասին անընդհատ ահազանգում են Սիսիանից: Մենք հույս ունենք, որ նա, նախեւառաջ, բացատրություն կտա հանրությանը, թե որքանով կապ ունի կադրային այդ լուծումների հետ (տա Աստված, որ այդ ամենը սովորական ասեկոսեների շարք լինի): Հույս ունենք նաեւ, որ նա կհրաժարվի Սիսիանի տարածքում գորշ կարդինալ լինելու հավակնությունից. իմիջայլոց, գորշ կարդինալի՝ սպիտակ թելով շուլալված եւ չարդուկված կոստյումն այնքան էլ չի սազում (չի պատշաճում) իրեն:

Հույս ունենք նաեւ, որ տիկին Ալիսա Հովակիմյանը եւ նրա ամուսինը՝ Հենզել Առաքելյանը, ով ժամանակին գլխավորել է կուսակցության Սիսիանի շրջկոմը եւ բարոյականություն քարոզել սիսիանցիներին, ովքեր մեզ համար եղել եւ մնում են հարգելի անձնավորություններ, կհրաժարվեն պրոտեկցիոն մեքենայի զորությամբ ձեռք բերված պաշտոնից, եթե նույնիսկ Սիսիանի պոլիկլինիկայի վարիչ լինելը տիկին Ալիսայի երիտասարդական տարիներից անկատար մնացած երազանքն է եղել:

Ինչ վերաբերում է Սիսիանի բժշկական կենտրոնի նորանշանակ տնօրենին, ապա… Այդ հիվանդանոցում, հիրավի, լուրջ խնդիրներ կան՝ տարիներով կուտակված: Եվ այդ խնդիրների լուծումը ծառայողական մեքենայի վարորդի փոփոխությամբ սկսելն այնքան էլ ողջամիտ չէ: Այնուհետեւ՝ այնքան էլ պատվաբեր չէ կադրային նման աթուրմա կազմակերպելը կադրային լուրջ դեֆիցիտ ապրող հիվանդանոցում, մանավանդ որ դա արվում է ինչ-որ մի կլանի ամբիցիաները բավարարելու համար:

Մի հարց էլ Սյունիքի մարզպետին՝ ի՞նչ եղավ Սիսիանի հիվանդանոցի եւ հոսպիտալի միավորման նախագիծը: Մի՞թե Արտյոմ Թադեւոսյանին ազատելով Սիսիանի հիվանդանոցում ամեն ինչ իր տեղն ընկավ: Բա էն երեխան՝ լույս աշխարհ գալիս, Սիսիանից Գորիսի հիվանդանոց՝ կեսարյան վիրահատության տանելիս, ինչո՞ւ մահացավ: Հարգանք Սլավիկ Ամիրյանին, որ գոնե երեխայի մոր կյանքը փրկեց:

Սիսիանի հիվանդանոցում կատարվող կադրային խաղերն ուսումնասիրելիս հեռախոսազրույց ունեցանք Սիսիանի պոլիկլինիկայի այլեւս նախկին վարիչ Սուսաննա Հովասափյանի հետ: Բժշկուհին ահաբեկված էր, պատրաստ չէր անկեղծ զրույցի եւ ջանում էր համոզել, որ ինքը պոլիկլինիկայի վարիչի պարտականություններից ազատվել է սեփական դիմումի համաձայն: Ըստ բժշկուհու՝ հիվանդանոցն ունի նոր տնօրեն, ով կամենում է իր թիմով աշխատել: Մինչդեռ՝ մինչեւ հիմա կարծում ենք, որ բժշկուհին դա հեգնանքով է ասել, քանզի երբեւէ չէինք լսել, որ հիվանդանոցում էլ են թիմով աշխատում, ինչպես կուսակցություններում, մարզական խաղերում: Մինչեւ հիմա կարծում էինք, որ հիվանդանոցում գլխավորը պրոֆեսիոնալիզմն է… Եվ եթե բժշկուհին դա հեգնանքով չի ասել, ապա՝ շատ ափսոս: Շատ ափսոս, որ նա, ընտանեկան բժշկի իր ներկայիս դիրքը եւս կորցնելուց ահաբեկված, բժշկական կենտրոնի տնօրենի գործառույթներն ու տնայնագործությունն իրարից չի տարբերում կամ ձգտում է այդպիսի մարդու տպավորություն թողնել:

Առհասարակ արժեր ծանոթանալ Սիսիանի բժշկական կենտրոնի նորանշանակ տնօրենի կենսագրությանն ու աշխատանքային ուղուն. միգուցե հենց այդկերպ գտնեինք մեզ մտահոգող հարցերի պատասխանը:

Իսկ կադրային այդ լուծումները արդարացված կհամարվեն, եթե Սիսիանի հիվանդանոցում բուժական սպասարկման գործը (այդ ամենի արդյունքում) գոնե մի քիչ բարելավվեր: Տա Աստված, որ այդպես էլ լինի…

ՍԱՄՎԵԼ ԱԼԵՔՍԱՆՅԱՆ

Հ.Գ. Հունվարի 13-ին սույն հրապարակման էլեկտրոնային տարբերակը քննարկվել է Սիսիանի հիվանդանոցի կոլեկտիվի ժողովում: Այդ նպատակով Սիսիան էր ժամանել մարզպետարանի առողջապահության եւ սոցիալական ապահովության վարչության պետ Աշոտ Ծատրյանը: Ելույթ ունեցողների խոսքի առանցքը մեր հոդվածն էր, թեեւ ներկաները տեղի-անտեղի (նոր տնօրենին եւ վարչության պետին հաճոյանալու համար) հայտարարում էին, որ ծանոթ չեն հրապարակմանը: Քննարկմանը չէր հրավիրվել «Սյունյաց երկիրը», չէին մասնակցում լրագրողներ: Ելույթ ունեցողներից եւ ոչ մեկը չի հերքել հրապարակման մեջ տեղ գտած փաստերը եւ մտահոգության առար կա երեւույթը: Այդ ամենով հանդերձ՝ գնահատելի է մարզպետարանի եւ հիվանդանոցի նորանշանակ ղեկավարի քայլը՝ քննարկելու թերթի հրապարակումը: Տարօրինակ էր միայն Աշոտ Ծատրյանի պահվածքը: Իր գիտակցական կյանքում երբեք եւ որեւէ հարցով սեփական կարծիք չհայտնած այդ պարոնը խոսել է նաեւ իր սիրելի թեմայով՝ ականջների թեմայով՝ իբր ինքը տեսնում է, թե ում ականջներն են երեւում հրապարակման հետեւում: Աշոտ Ծատրյանի համար, ի դեպ, ականջը քաղաքական կատեգորիա է եւ հաց վաստակելու միջոց: Օրինակ, եթե չլիներ հայտնի մարդկանց ականջը, ժամանակին իրեն չէին նշանակի մարզպետարանի առողջապահության վարչության պետ, եւ ոչ ոք չէր հանդուրժի նրա ակնհայտ ու տեւական պարապությունն այդ պաշտոնում: Չլիներ հայտնի մարդկանց ականջը, ապա Սիսիանի հիվանդանոցում ստեղծված վիճակի համար առաջինը նրա ձեռքից կբռնեին ու դուրս կշպրտեին: Հիմա էլ, իր հետեւում ունենալով հայտնի մարդկանց ականջը, նա թոզ է փչում սիսիանցիների աչքին եւ արմատական բարեփոխումներ խոստանում Սիսիանի հիվանդանոցում: Մենք հաճույքով եւ անհամբերությամբ սպասում ենք այդ բարեփոխումներին: Իսկ եթե խոստացած բարեփոխումները տեղի չունենան, ապա ականջների մասնագետ Աշոտ Ծատրյանին հիշեցնելու ենք առասպելական Միդասի ականջների պատմությունը: Ի դեպ, Փյուռիգիայի թագավոր Միդասն Ապոլլոնի եւ Պանի երաժշտական մրցույթի դատավորն էր: Իր տգիտության պատճառով Միդասը հաղթանակը շնորհել է Պանին: Զայրացած Ապոլլոնը ձգել է Միդասի ականջները: Վերջինս փյուռիգիական գլխարկի տակ տեւական ժամանակ թաքցրել է իր երկար ականջները, սակայն, ի վերջո, այն հայտնի է դարձել բոլորին…

Խրախճանք ժանտախտի ժամանակ

▙ î áÝ³ Ï ³Ý ûñ»ñÇ ³ñÓ³ . ³Ýù

ՍԿԻԶԲԸ՝ ԷՋ 1

կստանա հայր եւ որդի Հակոբյանների անաշխատ եկամուտներից: Վերջիններս, մինչդեռ, բավարարվում են մանր-մունր եւ երեւութական աշխատանքներով: Ավելին՝ շարունակում են իրենց ձեռքում կենտրոնացնել մանր ու միջին բիզնեսը՝ մեծ վնաս հասցնելով մարզի սոցիալ-տնտեսական զարգացմանը: Մարզպետը, այդուհանդերձ, հանդես է եկել մի իսկապես դրվատելի նախաձեռնությամբ. նա կոչ է արել շինարարներին՝ հրաժարվել «ատկատներից»: Վերջիններս, սակայն, պատասխանել են. «Երբ որ հանքարդյունաբերության մեջ եւ մասնավորապես Քաջարանի կոմբինատում վերանա ստվերը, այն ժամ էլ շինարարությունում կվերանան «ատկատները»», ինչով եւ ավարտվել է հեքիաթը:

Ներկայացվեցին նաեւ 2014-ին մարզին սպառնացող վտանգներն ու տարվա հիմնական անելիքները: Փոխարենն ընտրվեց իշխանական խրախճանքներ կազմակերպելու, սյունիքյան ներկա ստատուս-քվոն, ուժերի ներկա դասավորությունը ցուցանելու՝ խելք ու ջանք չպահանջող գործելակերպը:

Լուռ էին մեր խորհրդարանականները: Մեծամասնական ընտրակարգով նշանակված երկու պատգամավորը՝ Հայկ Գրիգորյանն ու Արմեն Կարապետյանը երիցս հաստատեցին իրենց ծորուն բացակայությունը մեր ընթացքից: Ե՛վ կենսաթոշակային կուտակային ֆոնդի, ե՛ւ գազային խարդախ գործարքների պատճառով պլտպլտացող հանրության մեջ չլսվեց երկու այդ անձնավորության ծպտունը:

Դե իսկ իշխանական խրախճանքները… Գորիսում, օրինակ, քաղաքապետ Նելսոն Ոսկանյանը հերթական անգամ աչքի ընկավ էկզոտիկ պարերով՝ այդպես էլ չիմանալով, որ քաղաքապետի առաջիկա ընտրությունում մարզպետն արդեն իսկ իշխանության թեկնածու է հռչակել մեկ ուրիշի: Այդ օրը գորիսյան պարահրապարակում հանդես եկան նոր աստղեր՝ հատկապես իշխանավոր կանանց փաղանգից: Այդ բոլորով հանդերձ, սակայն, խաղաղ, իշխանությունների շուրջ համախումբ Գորիսի տեսլական ուրվագծելու պատրանքն այդպես էլ պատրանք մնաց: Համայնքի ավագանին, որոշ գյուղապետեր ու խոշոր գործատուներ հրաժարվեցին մասնակցել խրախճանքին: Ավագանին, որ անցած մեկ-երկու տարում կենդանության նշաններ ցույց չէր տվել, տարեվերջին հանդես եկավ անսպասելի ակտիվությամբ: Նախ՝ համայնքի 2014թ. բյուջեն հաստատելիս քաղաքապետից պահանջեց հաշվետվություն 2013թ. ծախսերի մասին, ինչն իբր կներկայացվի առաջիկայում: Ավագանին Ամանորի շեմին փորձեց պարզություն մտցնել աղմկահարույց մի քանի հարցում. իսկապե՞ս քաղաքապետն իր սեփական ընկերության բակի եղեւնին կտրել ու քաղաքապետարանին է վաճառել 200 հազար դրամով՝ քաղաքի գլխավոր տոնածառը դնելու համար (մի՞թե անտառաշատ Գորիսում անտառտնտեսությունը մի եղեւնի չի տվել քաղաքին), իսկապե՞ս քաղաքապետարանը ծառայողական նոր ավտոմեքենա գնելու մասին ավագանու որոշումը կեղծել է, ճի՞շտ է արդյոք, որ քաղաքապետը (առանց վճարի եւ առանց ավագանու որոշման) սեփականացրել է ջրային բաժնի ավտոհավաքակայանին կից 4000 քառ. մ տարածքը՝ շահարկելով ՀՀ նախագահի անունը. իբր նախագահն այնտեղ առանձնատուն կառուցելու մտադրություն ունի (հողամասը, մինչդեռ, գրանցվել է քաղաքապետի մերձավորներից մեկի անվամբ), ճի՞շտ է, որ հանրապետության իրավապահները հետաքննություն են սկսել քաղաքապետարանում՝ Ռոբերտ Հակոբյանի՝ ՀՀ ոստիկանապետին մեկ-երկու ամիս առաջ հղած դիմումի հիման վրա: Չստանալով այդ հարցերի պատասխանը՝ ավագանու անդամները պատշաճ չհամարեցին մասնակցել իշխանական հացկերույթին:

Իշխանական խրախճանքից հրաժարվածների մի մասն էլ իր պահ-

ՇԱՐՈՒՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ՝ ԷՋ 7

êÚàôÜÆøÆ Ø² ð¼Æ ¶Úàôô º ðÀ

Արծվանիկ

ՀՐԱՆՏ ՍԱՀԱԿՅԱՆ

Տեղանքը համաշխարհային տեղացուցային համակարգում 46 աստիճան 28՛ 25՛՛ արեւելյան երկայնության եւ 39 աստիճան 15՛ 42՛՛ հյուսիսային լայնության հանգուցակետն է, ծովի մակերեւույթից բարձր է մոտ 1140մ: Գյուղը գտնվում է Բարգուշատի լեռնաշղթայի ճյուղավորման մեղմաթեք լանջերին, Կապան մարզոստանից 8 կմ հս-արլ, Կապան-Գորիս մայրուղու վրա, ունի 20,2 քառ. կմ տարածք եւ հարեւանում է ԶՊՄԿ լճազտիչ թափուկավայրին:

Ըստ պատմիչ Ստ. Օրբելյանի՝ գյուղը Երեց կամ Երիցակավանք է կոչվել այրու որդու՝ «խարազնագեստ եւ խստակրոն ճգնավոր Երիցակի» անվամբ, ով 6-րդ դարում ներկայիս գյուղի մերձակայքում կառուցել էր Երիցավանքը, եղել վանահայր, այնուհետեւ, Մուշե Այլաբերցի կաթողիկոսի (526-534) հաճությամբ օծվել Սյունիքի եպիսկոպոս (Օրբ., Ի, ՀԴ): Թեմը ղեկավարել է մեկ տարի:

Պատմական հարուստ անցյալ ունեցող գյուղը, որ մերձակայքում հնավայրեր ունի, մատենագրության մեջ առբերվել է տարընթերցվածներով՝ Արցեվանիկ, Երեց-Երեցվանիկ, Երիցավանք, Երիցավանիկ, Իրիցվանիկ, Կարմիր վանք, Նախջավանիկ: Կապանա խոսվածքում Ըրցվանեք է, բառաթեքումներում՝ Ըրցվանգա: Արծվանիկ անհեթեթ անվանումը շրջանառվել է ռուսատիրության ուշ ժամանակներից:

Մերձակայքում են Ագռավի տապան միջնադարյան կառույցը, մ.թ. ա. 4-1-ին դարերի հնագույն ամրոցների ավերակները, որտեղ գտնվել են ձայնարկու գուսանների բրոնզե արձանիկներ: Դրանց աջ ձեռքերին ագուցված են շան, իսկ գլուխներին՝ աքաղաղի կատարներով ու կենդանիների եղջյուրներով դիմակներ: Արձանիկները պահվում են Մոսկվայում՝ ՌԴ պատմության պետական թանգարանում:

Տաթեւի վանքի տասներորդդարյան հարկացուցակում Երեց գյուղը հիշատակված է Բաղաց աշխարհի Քաշունիք (կամ Բարգուշատ) գավառում, ի թիվս 52 գյուղերի, հարկի 12 դահեկան չափով: Պատմության հոլովույթում գավառների սահմանները փոփոխվում էին եւ, ըստ այդմ՝ գյուղը հիշվել է նաեւ Աճնան գավառում, Կյուպարայի մահալում, երբեմնակի հիշվել է որպես ավան, գավառի կենտրոն: Կրթալուսավորչական աշխատանքը գյուղում, սկսած Երիցակ 1-ինի ժամանակներից, եղել է եկեղեցու առաջնահերթ գործառույթներից մեկը: Դրա վկայությունը երիցվանիկցի ուսյալ այրերի անվանական հիշատակումներն են մեր մատենագրության մեջ: Սուրբ Երիցակի կառուցած Սբ Նախավկա եկեղեցու տարածքի «պարսպից ներս կային շուրջ քառասուն խցիկներ՝ քուրձ հագնող լռակյաց մշտական ճգնավորներով, որոնք… անընդհատ տքնությամբ վառվում էին հոգու շնորհների բոցով» (Օրբ., Ի): 9-րդ դարի վերջին տասնամյակում, Գեւորգ Գառնեցի (877-897), այնուհետեւ Մաշտոց Եղիվարդեցի (897-898) կաթողիկոսների հայրապետության տարիներին, հայտնի էր Երիցավանքի առաքինարանի մեծ կառավարիչ Թեոդորոս քահանան, ում հետ ճգնողական մեծամեծ գործերով փայլում էր նաեւ հայր Գեորգ քահանան, ով թաղված է Սբ Երիցակի մոտ, նույն սրբարանում: Մաշտոցի կաթողիկոսության ժամանակ էլ Գեորգը շարունակ նրա հետ էր լինում, մինչեւ նրա վախճանը: Իսկ Մաշտոցի մահից հետո գալիս ու բերում է այդ երանելու շուրջառը, խույրակերպ կնգուղը եւ պարեգոտը որպես նշան Սյունիքի համար (Օրբ., ԽՋ):

Առանձնակի հետաքրքրություն ունի Վահանավանքի տապանագրերից այս մեկը. «Թվ. ՇՃԱ (1102): ՀԱՅՐ ԳՐԻԳՈՐ ԵՐԻՑՈ ՎԱՆԱՑ ԱՌԱՋՆՈՐԴ ՈՒԽՏԻՍ ՅԻՇԵՑԻՔ ՅԱՂԱԹՍ»: Արդ, Հայր Գրիգորը ծնունդով Երիցավանքից էր, առաջնորդել է Վահանավանքում, ուր եւ գտել է իր հանգիստը (Գր. Գրիգորյան, Վահանավանք, էջ 66):

Գյուղից մոտ 3 կմ հս-արլ՝ բարձրավանդակի վրա, քարափի պռնկին կիսավեր Երիցավանքն է՝ Կարմիր վանքը, հարակից Ստ. Նախավկա եկեղեցիով ու ճգնավորի մատուռով: Բնակավայրի արեւմտակողմում՝ Կռավար հանդում, թաղակապ եկեղեցի կա, որի շուրջը հնամենի ու նորոգ հանգուցելոց գերեզմանատունն է: Ըստ Տեղանունների բառարանի՝ եկեղեցին կառուցվել է 991թ., Երիցակ 2-րդի կողմից: Պահպանվել են վերանորոգման (1032թ.) եւ այլ արձանագրություններ: Մի խաչքարի թիկունքին փորագրված է 13 տողանոց ծածկագիր արձանագրություն, որը, ըստ պրոֆ. Ա.Գ. Աբրահամյանի, «մեզ հասած հնագույն ծածկագրությունն է, որի մեջ միաժամանակ գործ են ածված վեց տարբեր բանալիներով գաղտնագրված ծածկագրեր…»

(Հայկ. ծածկագրություն, էջ 183):

Ասպատակող թշնամուն դիմակայելու վերաբերյալ գյուղում սերնդե-սերունդ ավանդազրույցներ են հյուսվել, հիշարժանները գրառված են բանահավաքների կողմից: Լենկթեմուրյան շրջանի (1370-1405) ինքնապաշտպանական ճակատամարտի ասքն «Ըռնածօր» պատումի մեջ է: Ցայժմ տեղանքն այդպես էլ կոչվում է՝ Արյան ձոր… Պատմում են, որ Կռավարից գյուղը ներկայիս տարածքն է տեղափոխվել 14-րդ դարում եւ միավորել շրջակա Կռմեն, Կաթնաղբյուր, Բերդագլուխ, Քամխաչ, Պիածտեղ փոքրավուն գյուղերը: Հարկադրական արտագաղթեր միշտ եղել են, սակայն նախնյաց արյան կանչով սերունդները վերահաստատվել են հայրենի եզերքում: Գյուղի երեւելիները գործունյա մասնակցություն են ունեցել ազգային-ազատագրական շարժումներին: Իսրայել Օրու՝ Անգեղակոթի հայտնի ժողովին (1699) մասնակցել է նաեւ Երիցավանքի մելիք Փիլիպոսը: Հետագայում մելիքությունը ժառանգեց իր դիվանագիտական ներուժով տակավին սակավ բացահայտված՝ դավաճան հորջորջված մելիք Ֆրանգյուլը, ով այրի մոր հետ Սեւաքար վերաբնակության էր եկել Պարքոն գյուղից…

1881թ. վիպասան Ռաֆֆին հյուրընկալվել է գյուղում եւ տարեցներից գրառել բնակավայրի հնավանդ անվանումներից մեկը՝ Նախջավանիկ, որն, ի դեպ, առկա է Տաթեւի վանքի հին հարկացուցակում՝ 10 դահեկան հարկաչափով: Հուշագրող Ա. Ծատուրյանը տեղեկագրել է, որ վիպասանի այցելության ժամանակ Գյուղի մոտ 3 կմ հս-արլ՝ բարձրավանդակի վրա, քարափի պռնկին կիսավեր Երիցավանքն է՝ Կարմիր վանքը, հարակից Ստ. Նախավկա եկեղեցիով ու ճգնավորի մատուռով: Բնակավայրի արեւմտակողմում՝ Կռավար հանդում, թաղակապ եկեղեցի կա, որի շուրջը հնամենի ու նորոգ հանգուցելոց գերեզմանատունն է: Ըստ Տեղանունների բառարանի՝ եկեղեցին կառուցվել է 991թ., Երիցակ 2-րդի կողմից: Պահպանվել են վերանորոգման (1032թ.) եւ այլ արձանագրություններ: Մի խաչքարի թիկունքին փորագրված է 13 տողանոց ծածկագիր արձանագրություն, որը, ըստ պրոֆ. Ա.Գ. Աբրահամյանի, «մեզ հասած հնագույն ծածկագրությունն է, որի մեջ միաժամանակ գործ են ածված վեց տարբեր բանալիներով գաղտնագրված ծածկագրեր…»

(Հայկ. ծածկագրություն, էջ 183):

Ասպատակող թշնամուն դիմակայելու վերաբերյալ գյուղում սերնդե-սերունդ ավանդազրույցներ են հյուսվել, հիշարժանները գրառված են բանահավաքների կողմից: Լենկթեմուրյան շրջանի (1370-1405) ինքնապաշտպանական ճակատամարտի ասքն «Ըռնածօր» պատումի մեջ է: Ցայժմ տեղանքն այդպես էլ կոչվում է՝ Արյան ձոր… Պատմում են, որ Կռավարից գյուղը ներկայիս տարածքն է տեղափոխվել 14-րդ դարում եւ միավորել շրջակա Կռմեն, Կաթնաղբյուր, Բերդագլուխ, Քամխաչ, Պիածտեղ փոքրավուն գյուղերը: Հարկադրական արտագաղթեր միշտ եղել են, սակայն նախնյաց արյան կանչով սերունդները վերահաստատվել են հայրենի եզերքում: Գյուղի երեւելիները գործունյա մասնակցություն են ունեցել ազգային-ազատագրական շարժումներին: Իսրայել Օրու՝ Անգեղակոթի հայտնի ժողովին (1699) մասնակցել է նաեւ Երիցավանքի մելիք Փիլիպոսը: Հետագայում մելիքությունը ժառանգեց իր դիվանագիտական ներուժով տակավին սակավ բացահայտված՝ դավաճան հորջորջված մելիք Ֆրանգյուլը, ով այրի մոր հետ Սեւաքար վերաբնակության էր եկել Պարքոն գյուղից…

1881թ. վիպասան Ռաֆֆին հյուրընկալվել է գյուղում եւ տարեցներից գրառել բնակավայրի հնավանդ անվանումներից մեկը՝ Նախջավանիկ, որն, ի դեպ, առկա է Տաթեւի վանքի հին հարկացուցակում՝ 10 դահեկան հարկաչափով: Հուշագրող Ա. Ծատուրյանը տեղեկագրել է, որ վիպասանի այցելության ժամանակ

Արցախյան ազատամարտում զոհված արծվանիկցիների հիշատակը հավերժացնող հուշակոթող

ցարական գավառային հաշտարար դատարանի ատյանն Արծվանիկում էր՝ գավառի կենտրոնում (Ռաֆֆին ժամանակակիցների հուշերում, էջ 283): Ըստ մի ավանդազրույցի՝ Ռաֆֆու այցելությունը զուգադիպել է դպրոցական նոր շենքի նավակատիքին: Տնօրեն ընտրվեց Մեսրոպ քհն Տեր-Հարությունյանը, ով իր քանքարով հայտնի էր Ղափանում (Սյունիք) եւ նրա սահմաններից դուրս: Ի դեպ, Ս. Խանզադյանի դիվանի գրառումներում տեղեկագրված է, որ կգնութեցի Գարեգին Նժդեհի նախնիները համատոհմ են Արծվանիկի Տեր-Հարությունյանների հետ…

1881-ին Կովկասյան ուսումնական շրջանի վարչությունը, Ստ. Ջելինսկու (ազգագրագետ Ստ. Մկրտչյան) նախաձեռնությամբ, սկսել էր Կովկասի բնակավայրերի վերաբերյալ տեղեկությունների հավաքումը գլխավորապես ուսուցիչների միջոցով: 1893թ. լույս տեսած 17-րդ գրքի մեջ զետեղված է Արծվանիկի դպրոցի ուսուցիչ եւ տնօրեն Եփրեմ Մելիք-Շահնազարյանի «Èç ï îâåðèé, ïðåäðàññóäêî â è íàðî ä í ûõ ïðè ì åò àð ì ÿ í Çà í åçóðñêî ãî óåçäà» հոդվածը, որը վերահրատարակվել է 1904թ. 34-րդ գրքում՝ համալրված օրհնանքներով, խնդուկներով, անեծքներով եւ այլ բանահյուսական նյութերով ու կենցաղային նկարագրություններով: 19-րդ գրքում նույն հեղինակի «Ñâàäüáû çà í åçóðñêèõ àð ì ÿ í» հոդվածի մեջ հարսանեկան սովորությունների մանրամասն նկարագրությունն է, 25-րդ գրքում՝ «Ñåëå í èå Àðôâà í èê Çà í åçóðñêî ãî óåçäà Åëèñàâåò ï î ëüñêî é ãóáåðí èè», գավառի տիպիկ գյուղի կենցաղի ամբողջական պատկերը:

Ծխերի թիվը գյուղում. 1823թ.՝ 11, 1832թ.՝ 23,1842թ.՝ 35, 1859թ.՝ 50, 1869թ.՝ 52, 1890թ.՝ 87: Բնակչության թիվը. 1831թ.՝ 143, 1897թ.՝ 933, 1926թ.՝ 779, 1939թ.՝ 861, 1959թ.՝ 667, 1970թ.՝ 712, 1979թ.՝ 639:

Գյուղի՝ 1855թ. կառուցված Սբ Աստվածածին եկեղեցին, հոգեւոր առաքելությունից զատ, հոգեւոր այրերի հետեւողականությամբ դիմակայել է թշնամական ներխուժումներին, որոնք հետ էին մղվում Տեր-Հարությունյան քահանայական տոհմի ղեկավարությամբ: 1905-06թթ. ազգամիջյան բախումների ժամանակ կարեւոր դերակատարում ունեցավ Մեսրոպ քահանա Տեր-Հարությունյանը, ով Բարգուշատի Ագարակ, Եղվարդ, Զեյվա, Մողես, Խդրանց, Ուժանիս, Կաշկառոտ գյուղերի համատեղ պաշտպանության կազմակերպիչն էր: Տեր Մեսրոպի որդին՝ ՀՅԴ անդամ Գրիշա Տեր-Հարությունյանը, զենք-զինամթերքի հայթայթման ջատագովն էր: Գյուղից արեւելք գտնվող գյուղերի բնակչությունը, ապահովության նպատակով, նրա հորդորով ապաստան գտավ Արծվանիկում:

Այս շրջանի դեպքերը նկարագրել-հուշագրել է առաջածորցի Սահակ Տեր-Աստվածատրյանը՝ ականատես գյուղագիր Ջանունին: Արծվանիկում օթեւանել ու հրատապ խորհրդակցություններ են անցկացրել անվանի հայդուկապետեր, ցարական աստիճանավորներ, 1906թ.՝ նույնիսկ գեներալ-նահանգապետը:

1914թ. հուլիսի 19-ին սկսվում է առաջին համաշխարհային պատերազմը, ռազմաճակատ մեկնելու ծանուցագիր են ստանում նաեւ արծվանիկցիները: Առաջին աշխարհամարտին մասնակցել են Սմբատ Հովհաննիսյանը, Խիկար Խաչատրյանը, Զիլփի Սահակյանը, Գեորգիսիմ Մանուչարյանը, Աղասի Սահակյանը, Արշակ Հայրյանը եւ ուրիշներ:

Մասնակիցների հուշերը գրի են առնվել: 85-ամյա Մկրտիչ Գեւորգյանը պատմում էր. **«Իմպերիալիստական պատերազմում ընկա Սարիղամիշ: 1914թ. դեկտեմբերի 9-ից մինչեւ 1915թ. հունվարի 5-ը վճռական ճակատամարտ էր տեղի ունենում այդ շրջանում: Ձմռան ցրտերի ու սառնամանիքների պայմաններում, ռուս զինվորների հետ, մարտնչում էինք չտեսնված համառությամբ: Դեկտեմբերի 22-ին հակահարձակման անցանք ու թշնամուն պարտության մատնեցինք»:**

1918-ից խառնակ ժամանակներ էին սկսվել: Բռնկված սովին ու խոլերայի համաճարակին ավելացան ազգամիջյան ընդհարումներն ու գաղթականների բազմությունը: Թուրքական զորքերը նպատակ ունեին գրավել Ղափանը, ողջ Զանգեզուրը եւ ճանապարհ բացել դեպի Նախիջեւան:

1918թ. հունիսի 28-ին Եղվարդի ճակատամարտում դաշնակցական Գրիշա եւ կոմունիստ Արարատ Տեր-Հարությունյան եղբայրների գլխավորած արծվանիկցիների զինված ջոկատն օգնության եկավ կռվողներին, հաղթանակի հասավ հայկական գյուղեր ներխուժած թուրքական ուժերի դեմ: Այդ ճակատամարտում ծանր վիրավորվել եւ մահացել է Գրիշա Հարությունյանը: Եղվարդի ճակատամարտի մասին հուշեր է թողել մարտերի մասնակից Արտաշես Ծատուրյանը:

Գրիշա Հարությունյանը ծնվել է 1885-ին, Արծվանիկ գյուղի հոգեւորականի ընտանիքում: Ավարտել է Շուշիի ռեալական դպրոցը, այնուհետեւ ուսումը շարունակել էջմիածնի ճեմարանում: Ծառայել է ռուսական բանակում, ստացել զինվորական սպայի կոչում: Ապա սովորել ու ավարտել է Պետերբուրգի սպայական դասընթացը: Մասնակցել է ռուսական բանակի արշավանքներին, իսկ հետագայում՝ հայրենի եզերքի պաշտպանությանը: Իր երիտասարդ կյանքը հայրենիքի ու ժողովրդի պաշտպանությանը նվիրաբերած Գրիշա Հարությունյանի անունն ու հիշատակն անհայտության մեջ էր մնացել:

Բռնություններն Արծվանիկում, որոշների նկատմամբ, պատճառաբանված էին: 1920թ. օգոստոսի 28-ին Կապանի բանտում սպանվել էր բոլշեւիկ հեղափոխական Արարատ Տեր-Հարությունյանը: Դժվար է որոշել, թե երիտասարդ կոմունիստին Նժդեհին հանձնելու գործում ինչ դեր են ունեցել համագյուղացիները:

Արարատ Տեր-Հարությունյանը ծնվել է 1892-ին, Արծվանիկ գյուղում, հոգեւորականի ընտանիքում: Սկզբնական տառաճանաչությունը ստացավ ծննդավայրի մեկդասյա դպրոցում, ապա սովորել է Շուշիի թեմական դպրոցում, բարձր գնահատականներով ավարտել է էջմիածնի Գեւորգյան ճեմարանը: Մասնակցել է մարքսիստական խմբակների կազմակերպմանը, ընկերացել է Անաստաս Միկոյանի եւ ուրիշների հետ: 1917թ. իրադրության փոփոխման պատճառով վերադառնում է ծննդավայր: Սկզբում աշխատում է ուսուցիչ Շրվենանց գյուղում, ապա՝ Արծվանիկում:

Ինչպես ճեմարանում, այնպես էլ Կապանի շրջանում՝ Սեւաքար, Զեյվա (Դավիթբեկ) գյուղերում մարքսիստական գաղափարներ էր պրոպագանդում: Արարատ Տեր-Հարությունյանի սպանությունը երկպառակություն առաջացրեց Արծվանիկում, մատնության մեջ միմյանց սկսեցին մեղադրել մարդիկ, թշնամացան գերդաստաններ, 20-ականներին հանիրավի զոհեր եղան:

Դավիթբեկ եւ Արծվանիկ գյուղերում հայտնված 11-րդ Կարմիր բանակը պատճառ եղավ այս եւ շրջակա գյուղերի բնակչության փախուստին: Արծվանիկի համար արյունահեղ մարտեր եղան, գյուղը երեք անգամ ձեռքից ձեռք անցավ: Նժդեհին հաջողվեց երկու անգամ դուրս շպրտել ռուս-թուրքական ուժերին: Երրորդ անգամ նա դիրքերը զիջեց առանց դիմադրության: Արծվանիկին այս անգամ վնաս չպատճառվեց:

«Երբ կարմիր բանակայինները մտան Արծվանիկ,

Խրախճանք ժանտախտի ժամանակ

ՍԿԻԶԲԸ՝ ԷՋ 5

վածքը բացատրում էր մարզպետի ներկայությամբ: Եվ վերջինիս միջոցներով ճաշկերույթի կազմակերպումը գնահատվեց իբրեւ Գորիսում հնազանդների եւ ընչաքաղցների ինչ-որ բոլուկ ձեւավորելու գռեհիկ փորձ: Ըստ նրանց՝ Գորիսում քեֆ անելու եկող մարզպետն անցած վեց ամսում գոնե մեկ անգամ պետք է հանդիպեր գորիսեցիների հետ, հետաքրքրվեր տարածաշրջանի հիմնախնդիրներով եւ ոչ թե գար քաղաքապետի աշխատասենյակ՝ նկարահանվեր ու քաղաքացիների ընդունելության պատրանք ստեղծեր: Գորիսում քեֆ անելու եկող մարզպետը պետք է ուժ գտներ իր մեջ եւ մինչ այդ օրը դեն շպրտեր Գորիսից խռոված լինելու մանկական կեցվածքն ու գոնե մասնակցեր քաղաքի եկեղեցու օծման արարողությանն ու քաղաքի ավանդական տոնին:

Այլ դրսեւորումներ ունեցավ կապանյան խրախճանքը: Կապանում էլ մարզպետարանը կանգնեց դահլիճը լցնելու դժվարագույն խնդրի առջեւ: Հատկապես չէին եկել քաղաքային իշխանության եւ ենթակա հիմնարկների հրավիրված աշխատակիցները:

Պարզվեց, նախեւառաջ, որ Վահե Հակոբյանը շատ ակտիվ, գրեթե ինքնամոռաց պարել գիտի, քանի դեռ նրան պարացնում են:

Պարզվեց նաեւ, որ մարզկենտրոնում գործում է «զոնդեր կոմանդա» (հայերենում՝ սանիտարական ջոկատ), որի ջանքով խրախճանքի եզրափակիչ փուլում հավաքվում եւ տներ են տեղափոխվում անորակ սպիրտի զորությամբ գետնին տապալված իշխանիկները:

Հաստատվեց իրողությունը, որ մեր մարզպետներից յուրաքանչյուրն ունեցել է եւ ունի իր նախասիրած երգը: Սուրեն Աբրահամյանը, օրինակ, սիրում էր «Մենք քաջ տոհմի զավակներն ենք» ոգեշունչ երգը, Սուրեն Խաչատրյանը՝ Գուսանի «Այունյաց սարեր» հրաշալի երգը: Եվ ժամանակին մարզի իշխանավորների մեծ մասն անգիր գիտեր այդ երգը, անգամ ընտանեկան միջոցառումներն էին սկսում եւ ավարտում Գուսանի երգով՝ մարզպետի հանդեպ իրենց սերը ցուցանելու համար: Վահե Հակոբյանն էլ, պարզվում է, իր նախասիրած երգն ունի՝ «Այն օրվանից, երբ գնացի…»: Այդ երգն էլ կատարվեց նրա պատվին: Սակայն մարզպետարանի ներքինիները եւ հատկապես նաժիշտները դա համարեցին դավադրություն՝ նյութված Կապանի քաղաքապետարանի կողմից: Այդ վրիպակը շտկելու գործը մեկ-երկու օր հետո իր վրա վերցրեց թատրոնի Կամոն: Նա (իր իսկ արտահայտությամբ) «հերոս» մարզպետին նվիրեց «Հորովել» երգը, ադրբեջանցու առոգանությամբ մի քանի անալի տեսարաններ ներկայացրեց՝ մոռանալով պարզապես, որ նախորդ բոլոր մարզպետներին էլ «հերոս» ու «մարզպետաց մարզպետ» է անվանել ու Ջմեռ պապի հագուստով հաճույք պատճառելու ծամածռություններ արել:

Դե, բայց, մեր բարեկամ Մագդա Գեւորգյանի պես ոչ ոք չի կարող երգել: Նախորդ տարվա քեֆին նա միայն հայտնի երգը կատարեց՝ «Սերս գաղտնի թող մնա», ինչի համար եւ արժանացավ Մաքսիմ Հակոբյանի անմեղ ծրարին. ընտրությունների տարի էր: Այս անգամ Մաքսիմ Հակոբյանը չկար, ծրարներ էլ չկային, եւ բարեկամուհիս իրեն դրսեւորեց պարարվեստում, չնայած այդ ոլորտում ակնհայտորեն զիջում էր մարզպետարանի կրթության վարչության պետ Նաիրա Ավանեսյանին, մանավանդ երբ հնչում էր «Արա վայվայ» կամ նմանատիպ մեկ այլ երգի խիստ այսօրյան ու ռիթմիկ մեղեդին: Վերջինս՝ բարակիրան այդ նահիրուհին, ի դեպ, շատ մեծ բեռ է վերցրել՝ նախորդ դարից խոնջացած իր ուսերին: Եվ ինքը պիտի պարի, եւ մարզպետին պիտի պարացնի: Պի տի իմանա, թե ովքեր են մարզպետի բարեկամներն ու չարակամները եւ պրոֆիլակտորիայում ամենօրյա սոյբաթի ժամանակ զեկուցի նրան: Ներպալատական մրցավազքում էլ հայտնի նաժիշտից հետ չպիտի մնա: Պետք է հետեւի, որ հանրակրթական դպրոցներում հանկարծ թերթ չընթերցեն, թե չէ իր ու շեֆի մասին շատ բան կիմանան, եւ նրանց լուսավոր ու պայծառ միտքը կմթագնի: Առանձին դպրոցների տարիֆիկացիաների ղալաթները պիտի օրինականացնի: Հիմա էլ՝ Սեյրան հետեւակայինի հետ, պետք է պարզի, թե գյուղապետերն ու դպրոցի տնօրեններն ինչու, հակառակ մարզպետարանի սպառնալիքների, հունվարի 11-ին Գորիսում ակտիվորեն մասնակցեցին ՀՀԿ մարզային խորհրդի նախագահ Սուրեն Խաչատրյանի կազմակերպած՝ Ամանորին եւ Սուրբ ծննդին նվիրված տոնահանդեսին: Խեղճը նույնիսկ կրթության գործով զբաղվելու ժամանակ չի ունենում:

Առհասարակ շատ տպավորիչ էր (եթե ոչ ամոթալի) այն կանանց պահվածքը, ովքեր կապանյան պարահրապարակում հերթական անգամ կալմեջ էին արել Այունիքի հերթական մարզպետին: Այդ տեսարանն ավելի ճշմարտացիորեն, քան Ալեքսանդր Գերցենն է նկարագրել նման մի դիպվածի առիթով, չենք կարող պատկերել: Ահա՝ **«Պարահանդեսը հիմար էր, անշնորհք… եւ շատ խայտաբղետ, ինչպես միշտ լինում է փոքրիկ քաղաքներում՝ արտակարգ դեպքերում: Ոստիկաններն իրար էին անցնում, համազգեստավոր պաշտոնյաները սեղմվում էին պատին, կանայք խռնվում էին թագաժառանգի շուրջն այնպես, ինչպես վայրենիները շրջապատում են ծանապարհորդներին»** («Եղելություններ եւ խոհեր» քառահատորյակի Ա հատոր, էջ 295):

Խրախճանքի այուժեն, սակայն, գագաթնակետին հասավ վերջում: Ներկաներից մեկը հնչեցրեց ավարտվող տարվա գլխավոր բացթողումը. խրախճանքի ժամանակ իր (եւս մի քանի հոգու) կենացը չեն խմել (ինչպիսի՜ ամոթ): Եվ առանձին կենացի չարժանացած այդ մեկը՝ սոփեստի առաքինությամբ շպարված, ով գիտակցական կյանքի ուղիղ կեսն անց է կացրել եւ անց է կացնում Մաքսիմ Հակոբյանի ընդունարանում՝ տնօրենի մոտ մտնելու եւ նրանից նոր պատվեր-պատառ թռցնելու բաղձալի ակնթարթին սպասելիս, որոտաց՝ հայոց ազգն ապագա չունի, եթե իրենց կենացը չեն խմել (մեծ իմաստով նա ճիշտ էր՝ չէր կարելի հինգհազարամյա ազգին նման մարտահրավերի առաջ կանգնեցնել): Եվ ծավալվեց բանակռիվ, որի ընթացքում մարզպետին դուր չեկավ Դավրուսի գյուղապետի՝ իրեն դիմելու ձեւը, ի վերջո ինքը մարզպետի աթոռի պահապանն է, եւ իրեն պետք է դիմել անուն-հայրանունով կամ ազգանունով, թե չէ՝ Վահե… Հետո մի քիչ քաշքշեցին իրար: Գյուղապետը «Այունյաց երկրի» լրագրողի հետ հեռախոսազրույցում, սակայն, հերքեց տարածված խոսակցությունը՝ «Ոչ ես եմ մարզպետին ապտակել, ոչ էլ ինքն է ինձ ապտակել»: Ներկաները, մինչդեռ, քաշքշուկի մասին ժողովրդական բանահյուսության գոհարի արժեք ունեցող պատմություններ են արդեն հյուսել՝ ավելացնելով, որ բանակռվի ժամանակ «պետականամետ» մի հանրապետական (այո, նաեւ հանրապետականների մեջ կան պետականամետներ) խորհուրդ տվեց՝ երաժշտության ձայնն առավելագույնս բարձրացնել, որպեսզի դահլիճը գլխի չընկնի, թե ինչ է կատարվում… Իսկ ավելի լուրջ՝ այնքան էլ կարեւոր չէ եւ ոչ էլ հետաքրքիր՝ մարզպե՞տը նախ մի մուշտի տվեց գյուղապետին, թե՞ հակառակը: Այդ պատմության մեջ մեկ այլ երեւույթ է մտահոգիչ: Պարզվում է (դատելով ոչ միայն այդ օրվա պատահարից), որ մարզպետն այդպես էլ իրեն չի պատկերացնում մտավորականի ֆուտլյարում, գիտության մարդու կաղապարում (ասում են՝ գիտությունների թեկնածու է եւ հավակնում է դառնալ գիտությունների դոկտոր), իրեն անհանգիստ է զգում անգամ մարզպետի, շատ փող գտած դերում: Նա համառորեն փորձում է «կրուտոյ» տղայի տպավորություն ստեղծել. երեւի ինչ-որ մեկին է ուզում նմանվել կամ ինչ-որ մեկի հետապնդող ստվերից ձերբազատվել: Ավա՜ղ, «կրուտոյ» տղայի դերում էլ ինչ-որ բան չի հերիքում: Այդ դերի համար էլ լուրջ որակներ են պետք. միայն ենթակաների վրա տեղի-անտեղի ջղայնանալը քիչ է դրա համար:

Ինչեւէ, տեղի ունեցավ նաեւ խրախճանքի ամենակարեւոր «պրոցեդուրան». ներկաները հոտնկայս խմեցին հանրապետության նախագահի կենացը:

Իշխանական խրախճանքները մարզում տեղի էին ունենում այն օրերին, երբ հայտնի էր դարձել, որ անցած մեկ տարում Այունիքի բնակչությունը զգալիորեն պակասել է, որ ծնունդների մակարդակով մարզը Հայաստանում ամենացածր նիշն ու նի… Միայն այդ փաստերը հիշելուց հետո հասկացանք, թե ինչու էր այդպես ինքնահիաց ու ինքնամոռաց պարում մարզպետը:

Իհարկե, այդ օրերին ուրախանալու ուրիշ առիթներ էլ ուներ նա. մարզի մանկահասակ երեխաներին Ամանորի տոպրակ էր բաժանել, ինչն անսահման ուրախությամբ էին ընդունել երեխաների մեծ մասն ու նրանց ծնողները. ժամանակներն են այդպիսին:

Տոպրակներով ուրախանալու-երջանկանալու երեւույթը մեզ հիշեցրեց մեծն Համո Սահյանի մի զրույց՝ **«Շիրազին տեսել եմ ներաշխարհը սուզված վիճակում. աղքատը նստած էր, հիսուն ռուբլի տվեց, գնաց: Հետո լաց եղավ աղքատի ճակատագրի համար՝ ինչո՞ւ ինքն ունենա, իսկ նա չունենա»:**

Մեզ մոտ մեր օրերում այլ չափանիշներ են իշխող դարձել՝ բիրդանաղաները, հայտնի կուսակցությունների լիդերները բարեգործի, հումանիստի իրենց գարշելի արձաններն են կանգնեցնում ունեզրկվածների, տոնական տոպրակով ուրախացողների օրավուր ստվարացող շարքերի վրա: Այնպես որ ինչքան շատ լինեն Ամանորի տոպրակով ուրախացողները, այնքան հաստատուն կլինի օլիգարխիկ-ֆեոդալական համակարգը Այունիքում: Այդ ճանապարհով էլ գնում ենք, եւ գնում ենք հաստատուն, աներեր երթով:

Տոնական միջոցառումների խճանկարն ամբողջացավ եւս երկու իրադարձությամբ:

Նախ՝ մայրաքաղաքային մամուլի մի քանի միջոցներ ներկայացրին տեղեկություններ մարզպետի վերջին տարիների եկամուտների մասին՝ ազդարարելով, որ 2012թ. վերջին նա իր հաշվին ունեցել է 1 մլրդ 500 մլն դրամ, ինչպես եւ 3 մլրդ 146 մլն դրամի ու 389 հազար 930 դոլարի հանձնված կամ վերադարձված փոխառություն, երեք բնակարան, վեց շենք-շինություն, վեց հողամաս, վեց ավտոմեքենա: Եկամուտներն ավելացել են 2013-ին: Այս թվերը ցույց են տալիս, որ ինչքան մեծանում է Այունիքի աղքատների թիվը, որքան իջնում է մարզի բնակչության կենսամակարդակը, որքան պակասում է մարզի բնակչությունը, որքան ամայանում են մարզի գյուղերը, այնքան շատանում են մարզպետի անաշխատ եկամուտները:

Այդքան միջոցներ եւ իշխանական լծակներ ունեցող անձնավորությունը, սակայն, ի վիճակի չէր տոնական օրերին մաքրելու կամ մաքրել տալու մարզի քաղաքների փողոցներն անգամ: Եվ մի ամբողջ ամիս «վայելեցինք» քաղաքների սառցակալած փողոցների հմայքը:

Այնուհետեւ՝ բանակից ժամանակին խռոված պարոնը հագավ զինվորական համազգեստ եւ Ամանորի նախօրյակին գնաց պաշտպանական գիծ՝ լուսանկարվելու: Լուսանկարներն արագորեն տարածվեցին, ինչից հետո, կարծում ենք, ադրբեջանական բանակում խուճապ սկսվեց: Իսկ մենք՝ հայերս, մի ուրիշ սարսափ ապրեցինք մարզպետի՝ շրջանառության մեջ դրված նկարներից. մի՞թե հայ զինվորականի սրբազան հագուստ-կապուստով ծպտվող անձնավորությունն այդքան վախվորած, աղավաղված ու հոգնած տեսք կարող է ունենալ…

ՍԱՄՎԵԼ ԱԼԵՔՍԱՆՅԱՆ

այնտեղ նրանք ոչ մի բնակչի չհանդիպեցին, քանի որ բոլորը փախել էին ներքեւի ձորերը կամ շրջանի հեռավոր գյուղերը՝ մտավախություն ունենալով, թե Ադրբեջանի թուրքերը եւ բոլշեւիկները դաշն կնքած գալու եւ կացիններով կոտորելու են բոլորին: Նույնիսկ գյուղի բոլշեւիկյան կազմակերպության ղեկավար Արարատ Տեր-Հարությունյանին չէր հաջողվել իր հորդորներով գյուղացիներին հետ պահել փախուստից» (Գ.Սմբատյան «Երկաթե վարագույրից այս կողմ», Երեւան, 2009թ., էջ 171):

Թուրքական մի ջոկատ շարժվեց Դավիթբեկ՝ Արծվանիկի ուղղությամբ ու գրավեց մի շարք գյուղեր:

Արծվանիկը նվաճվեց, գյուղացիներն ավելի քան 40 զոհ տվեցին:

«Գյուղում մնացածներից շատերը, այդ թվում կանայք եւ երեխաները, զոհ են դառնում կարմիր բանակայինների կույր վրեժխնդրությանը, նրանք Արծվանիկում թալանում են բոլոր տները, բռնաբարում ավելի քան 30 կին» (տես՝ նույն տեղում, էջ 172):

Կարմիրներն Արծվանիկից ու շրջակա գյուղերից 12 ծերունու եւ մի քանի կանանց հավաքել ու գնդակահարել էին Արծվանիկ-Կարմրաքար ճանապարհի «Ցուրտ աղբյուր» կոչվող վայրում: Ի դեպ, այդտեղ գնդակահարվել է նաեւ տողերիս հեղինակի տատը՝ Նուբար Սահակյանը:

«1920թ. սեպտեմբերի 30-ին, 11 տարի բացակայելուց հետո, հայրենի գյուղ հասա, - իր հուշերում պատմում է Հայկ Տեր-Հարությունյանը, - դպրոցն ավերված էր: Գյուղը թողել էի երգի, բանաստեղծության մեջ, գտա ողբի մեջ, Նուրի փաշան իր ջոկատով ավերել էր գյուղը» (Հայկ Հարությունյան «Հուշեր», 1921թ., գյուղ Արծվանիկ, Կապանի արխիվ):

1921թ. ապրիլի 27-ին Տաթեւի վանքում կայացավ համազանգեզուրյան երկրորդ համագումարը, որը երկրամասը հռչակեց Լեռնահայաստան: Սպարապետ Գարեգին Նժդեհը դարձավ վարչապետ:

Ձանգեզուրյան գոյամարտը հայոց պատմության հաղթական էջն է, որին այունեցիների հետ միասին մասնակցեցին նաեւ արծվանիկցիները, գոյամարտում որոշվում էր ապագա Հայաստանի ճակատագիրը:

1922-23թթ., ինչպես Ղափանի շրջանի մյուս գյուղերում, այնպես էլ Արծվանիկում սով էր, դրան գումարվեց նոր աղետ, երբ 1922-ի ամռանն Իրանից մորեխը ներխուժեց եւ ոչնչացրեց հասունացած հացահատիկի դաշտերի մեծ մասը: Այդ մասին իրենց հուշերում պատմում էին համագյուղացիներ Շամիր Հարությունյանը եւ Սմբատ Հովհաննիսյանը: Ի դեպ, Սմբատ Հովհաննիսյանն Արծվանիկի առաջին պատգամավորն էր Ղափանի շրջանից, ով մասնակցել է Երեւանում 1922թ. տեղի ունեցած Հայաստանի խորհուրդների համագումարին:

Արծվանիկում հեղկոմի նախագահներ են եղել Հայկ Հարությունյանը (1921-22թթ.), Սմբատ Հովհաննիսյանը (1922-23թթ.), Շամիր Հարությունյանը (1923-26թթ.), Աղա Հայրապետյանը (1927-28թթ.):

Շուտով կոլեկտիվացումը հասավ նաեւ Արծվանիկ: Գյուղում կոլտնտեսությունը հիմնադրվեց 1932-ին, բայց 1929-ին արդեն կազմավորվել էր առաջին կոլեկտիվ տնտեսությունը, որի մեջ միավորվել էր 16 ընտանիք:

1930թ. աշնանը կոլտնտեսության մեջ մտավ 102-ից 30 ծուխ:

Հեշտ չի ընթացել կոլտնտեսային շինարարությունը գյուղում: Համատարած կոլեկտիվացման ժամանակ արգելվեցին հողի վարձակալությունը եւ վարձու աշխատանքը: Տեղական իշխանություններն իրավունք ստացան կուլակներից բռնագրավել հողեր, հանձնել կոլտնտեսությանը: Ի դեպ, ունեւոր Խոսրով Մերաղուլյանն ուներ 400 ոչխար, 300 խոզ, 60 կով եւ հսկայական հողային տարածքներ: Նրա մասին մեծահասակները պատմում էին. **«Ծանրակշիռ մարդ էր, ծնվել էր աշխատանքի համար, մեծ ունեցվածքի տեր էր, բայց երբեք չհղփացավ, բարեգործ էր»:**

Գյուղի քյոխվա Սերգեյ Մանուչարյանին, կուլակներ Բարխուդար Սահակյանին եւ Խոսրով Մերաղուլյանին արտաքսեցին գյուղից: Վերջինս աքսորից վերադառնալուց հետո աշխատեց գյուղում, մինչեւ որ 1938-ին էտապով տարան անհայտ ուղղությամբ, որտեղ էլ կնքեց իր մահկանացուն: Կոլտնտեսության վարչության նախագահն Արա Մանուչարյանն էր, իսկ գյուղական խորհրդի նախագահը՝ Արամ Գասպարյանը:

Կոլտնտեսության ստեղծման առաջին տարիներին մեծ ուշադրություն դարձվեց հացահատիկի ցանքատարածությունների ընդարձակմանը: Ավելացավ խոշոր եղջերավոր անասունների, լծկանների քանակը: 1931-32թթ. կոլտնտեսությունն ուներ արդեն 480հա հողատարածք եւ 210 լծկան եզ: 1931-32թթ. կառուցել են անասնապահական գոմեր: 1932թ. հիմք դրվեց ծխախոտի մշակությանը: 1931-32թթ. կառուցվեց առաջին չորանոցը, 1936-ին՝ երկրորդը: Չնայած մի շարք դժվարություններին, կոլեկտիվացման շնորհիվ վերացվեց կուլակությունը: Գյուղացիությունը դարձավ տեղական իշխանության ամուր հենարանը: Զգալիորեն բարձրացան գյուղացիների նյութական դրությունը եւ կուլտուր-կենցաղային մակարդակը:

ՇԱՐՈՒՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՋՈՐԴ ՀԱՄԱՐՈՒՄ

Տարեվերջյան հաշվետվություն

ØÃ³ Ï áõÛÃ

Մշակույթն ազգի հոգու, մտքի եւ կեցության ամենանուրբ, ամենախոր ու ամենապատկերավոր արտահայտությունն է: Այն ծնվում է ազգի հետ եւ նրանից սնվում ու ծաղկում դարերով: Մշակույթն ազգի դեմքն է, յուրաքանչյուր ազգ աշխարհին ներկայանում է ու ճանաչվում մշակույթով: Այնտեղ, որտեղ կա մշակույթ, կա եւ կյանք՝ իրական մարդկային կյանք:

Մշակույթն ապրում է մերթ դժվար, մերթ՝ թեթեւ կյանքով՝ այդկերպ հարթելով իր խորդուբորդ ու դարավոր հունը նաեւ Գորիսում: Մեր գողտրիկ Գորիսում, ուր երկնել են Ակսել Բակունցը, Գուսան Աշոտն ու Սերո Խանզադյանը, մշակույթը մեկ նիրհում է, մեկ՝ կայծկլտում, եռում ու դուրս գալիս իր հուներից:

Ամանորի նախօրյակին Գորիսի Վաղարշ Վաղարշյանի անվան դրամատիկական թատրոնի դահլիճում կայացավ Գուսան Աշոտի անվան մշակույթի կենտրոնի տարեվերջյան հաշվետվությունը: Այն իր մեջ ամփոփում էր մշակույթի կենտրոնի աշխատողների միահամուռ աշխատանքը: Միջոցառումը կարողացավ գեղեցիկ ու անմիջական տպավորություն ստեղծել: Այն կարծես դարձավ երկխոսություն մշակույթի աշխատողների եւ դահլիճի միջեւ: Գուսան Աշոտի անվան մշակույթի կենտրոնի տնօրեն Արկադիա Մարդյանը եւ Նելլի Արզումանյանը ներկայացրին նույն կենտրոնի, ինչպես եւ կենտրոնի գրադարանային բաժնի, երկրագիտական թանգարանի, պատկերասրահի, Սերո Խանզադյանի անվան տուն-թանգարանի անցած մեկ տարվա աշխատանքային ուղին:

Դահլիճի մարդաշատ լինելուց, նրանց ոգեւորված եւ գոհունակ ժպիտներից, ամեն ելույթից հետո հնչող ծափողջույններից պարզ երեւում էր, որ համերգ-հաշվետվության մասնակիցները կարողացել են իրենց ժողովրդական երգ ու երաժշտության, պարի, գեղեցիկ ու տպավորիչ խոսքի հարմոնիայի մեջ առնել հանդիսատեսին, ապահովել նրանց համար անհոգ ու սիրով լեցուն մի քանի ժամ:

2013 թվականին Գորիսը ճանաչվեց մշակութային քաղաք: Այդ գործում իր մեծ դերն ունի Գուսան Աշոտի անվան մշակույթի կենտրոնը՝ շնորհիվ տնօրեն Արկադիա Մարդյանի ներդաշն ու հետեւողական գործունեության: Մշակույթի կենտրոնը հաղթահարելով շատ դժվարություններ՝ միշտ ի կատար է ածել իր առաքելությունը թե՛ քաղաքում, թե՛ քաղաքից դուրս՝ միջոցառումներին ընդգրկելով նաեւ Գորիս քաղաքի շնորհալի երիտասարդներին: Ես նույնպես՝ որպես ուսանող, բազմիցս առիթ եմ ունեցել մասնակցելու մշակույթի կենտրոնում կազմակերպվող միջոցառումներին, տեսնելու մարդկանց նվիրական աշխատանքը: Մշակույթի տան հենց շեմից էլ զգացվում է մշակութային կյանքի եռուզեռը: Մերթ պարի խմբերի, ժողովրդական գործիքների համույթի երգ ու երաժշտության, կիթառի լսվող ելեւէջները, մերթ ասմունքի խմբակի երեխաների տպավորիչ խոսքը, գրադարանի ամենշաբաթյա եւ ամենամյա ցուցահանդեսներն ու միջոցառումները հաստատումն են այդ ամենի: Մշակույթի կենտրոնի մեծ դահլիճում գրադարանի կողմից հաճախ են կազմակերպվում գրական-երաժշտական երեկոներ, որին ներկա են լինում թե գորիսեցիներ եւ թե մայրաքաղաքից ու հանրապետության այլ վայրերից ժամանած հյուրեր:

Վաղարշ Վաղարշյանի անվան դրամատիկական թատրոնի դահլիճում կայացած միջոցառումը վկայությունն է Գորիսի ակտիվ մշակութային կյանքի: Այն ինքնանվեր մարդկանց հանապազօրյա աշխատանքի արդյունքն է:

Եկեք գնահատենք մարդկանց աշխատանքը, քանի որ գնահատված լինելը մարդու հոգեւոր առաջնային պահանջմունքներից է:

ԱՐՈՒՍ ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆ

Օրինակելի զինվորը

Կապանի N1 հիմնական դպրոցն ավարտելուց հետո Տիգրան Գեւորգյանն ընտրեց տնտեսագետի մասնագիտությունը՝ ընդունվելով Երեւանի պետհամալսարան: Երկրորդ կուրսի ավարտական քննությունները հաջողությամբ հանձնելուց հետո զորակոչվեց ազգային բանակ: Մեկնեց կատարելու սահմանադրական պարտքը: Մեկուկես տարուց ավելի է, ինչ նա հայրենիքի պաշտպանի համազգեստ է կրում եւ ինչպես երեւում է, բարեխղճորեն է կատարում հրամանատարի հրամաններն ու կարգադրությունները: Այդ մասին տեղեկանում ենք ծնողներից՝ Գեորգի Գեւորգյանին եւ Էլա Օրբելյանին՝ զորամասի հրամանատարի եւ անձնակազմի հետ տարվող աշխատանքների գծով տեղակալի ստորագրություններով շնորհակալական նամակից: Դրանում հայտնվում է, որ շարքային Տիգրան Գեւորգյանը կարճ ժամանակամիջոցում տիրապետել է զինվորական մասնագիտությանը, դարձել ուսման գերազանցիկ, կարգապահ մարտիկ: Զինվորական կոլեկտիվում վայելում է արժանի հեղինակություն, օրինակ է հանդիսանում ծառայակիցների համար: Դրանից զատ հրամանատարներին օգնում է ստորաբաժանումում կանոնադրական կարգուկանոն հաստատելուն: Նաեւ ակտիվ մասնակցություն է ունենում դիվիզիոնի հասարակական կյանքում: Նամակը եզրափակվում է բարեմաղթանքով, որը զորամասի ղեկավարությունն ուղղել է զինվորի ծնողներին՝ իրենց որդուն հայրենիքի իսկական պաշտպան դաստիարակելու համար:

Վ. ԼԵՎՈՆՅԱՆ

Խմբագրության փոստից

«Սյունյաց երկիր» թերթի խմբագիր Սամվել Ալեքսանյանին

Հարգելի պարոն Ալեքսանյան

Նամակս գրում եմ կարեւոր մի խնդրով: Ուզում եմ մարզում տեղյակ լինեն, որ մեր կողմից գրված ինը գրքից վեցն արդեն տպագրված է եւ դրված ընթերցողի սեղանին: Ունեմ նաեւ տպագրության պատրաստ երեք գիրք՝ Հուշագիրք 1941-45թթ. Հայրենական մեծ պատերազմում զոհված սյունեցիների (650 էջ), Հուշագիրք Արցախյան պատերազմում զոհված սյունեցիների (400 էջ) եւ Շինուհայրի դպրոցի պատմություն (442 էջ):

Մեծ ջանքի ու նվիրական աշխատանքի շնորհիվ պատրաստված այդ գրքերը, սակայն, ֆինանսների բացակայության պատճառով, չեմ կարող տպագրել:

Կարծում եմ՝ դրանց տպագրության համար կգտնվեն հովանավորներ կամ օժանդակողներ, որոնց կտրամադրեմ հանգամանալից տեղեկություններ այդ գրքերի բովանդակության մասին:

ԺՈՐԱ ՄԱՆՈՒՉՅԱՆ
Շինուհայր, հեռախոս՝ 077-795-267

Ազնիվ Ղահրամանյան

Ê áëù ÑÇß³ï³ÏÇ

Կյանքի 95-րդ տարում վախճանվեց Կապանի տարածաշրջանի առողջապահության բնագավառի հնագույն ներկայացուցիչ, բժշկուհի Ազնիվ Կարապետի Ղահրամանյանը, ում գիտակցական կյանքի մոտ վեց տասնամյակը նվիրված էր մարդկանց առողջությունը վերականգնելուն:

Ծնվել է 1918թ. Ադրբեջանի Շամախու շրջանի Մադրասա գյուղում: Միջնակարգ կրթությունը ստացել էր Բաքվում: 1937-ին ընդունվել է Երեւանի պետական բժշկական ինստիտուտը: Բուհն ավարտելուց հետո 1941թ. գործուղվել է Ղափանի շրջանի Արծվանիկ գյուղ, որտեղ էլ աշխատել է բժշկուհի: Այնուհետեւ տեղափոխվել է շրջկենտրոն եւ աշխատել պոլիկլինիկայում որպես վիրաբույժ եւ թերապեւտ: 1997թ. անցել է վաստակած հանգստի: Ամուսնացել էր Գրիշա Գրիգորյանի հետ, ով եր կար տարիներ խմբագրել է շրջանային «Պղնձի համար» թերթը: Ունեցել է երեք դուստր, որոնցից երկուսը ընտրել են մոր մասնագիտությունը եւ այժմ էլ աշխատում են Կապանի պոլիկլինիկայում: Աշխատանքային գործունեության ընթացքում արժանացել է պատվոգրերի եւ այլ խրախուսանքների:

Բարեխիղճ բժշկուհու անունը մշտապես կհիշեն բոլոր ճանաչողները:

«Կապանի բժշկական կենտրոն» ՓԲԸ

ՑԱՎԱԿՑՈՒԹՅՈՒՆ Վահրամ, Նելլի եւ Էլա Օրբելյանները եւ Գեորգի Գեւորգյանը խորապես վշտացած են Հրաչիկ Մարգարյանի մահվան կապակցությամբ, ցավակցում են Սուրենին եւ Թամարային եւ հանգուցյալի բոլոր բարեկամներին ու մերձավորներին:

ՑԱՎԱԿՑՈՒԹՅՈՒՆ «Սյունյաց երկիր» թերթի խմբագրությունը ցավակցում է Միհեր Եզիազարյանին, հորաքրոջ դստեր՝ Գոհար Սահակյանի անժամանակ մահվան կապակցությամբ:

ՑԱՎԱԿՑՈՒԹՅՈՒՆ «Սյունյաց երկիր» թերթի խմբագրությունը Ֆրեդիկ Առաքելյանի մահվան կապակցությամբ ցավակցում է Լիլիթ Առաքելյանին:

Սյունյաց երկիր

Գլխավոր խմբագիր՝
ՍԱՄՎԵԼ ԱԼԵՔՍԱՆՅԱՆ

ՀԻՄՆԱԴԻՐ ԵՎ ՀՐԱՏԱՐԱԿԻՉ
«ՍՅՈՒՆՅԱՑ ԱՇԽԱՐՀ» ՍԱՀՄԱՆԱՓԱԿ
ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՄԲ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ

Հասցե՝ Կապան, Շահումյան 20/32:
Հեռախոս՝ (0285) 5 25 63,
(091) 45 90 47,
(077) 06 28 02:
էլ.փոստ՝ syuniacyerkir@mail.ru
Ինտերնետ՝ www.syuniacyerkir.am

Թղթակցությունները չեն գրախոսվում եւ հեղինակներին չեն վերադարձվում: Խմբագրության եւ հեղինակների կարծիքները կարող են չհամընկնել:

Նյութերը ներկայացնել մեքենագիր վիճակում (3 մեքենագիր էջից ոչ ավելի):

«ԳՈՎԱԶԴ - ԾԱՆՈՒՑՈՒՄ» բաժնում տպագրվող նյութերի համար խմբագրությունը պատասխանատվություն չի կրում: Հղումը «Սյունյաց երկրին» պարտադիր է:

® նշանի տակ տպագրվում են գովազդային նյութեր:
Գրանցման վկայականը՝ 01Մ 000231:
Թերթը տպագրվում է «Տիգրան Մեծ» հրատարակչության տպարանում:
Հասցե՝ ք. Երեւան, Արշակունյաց 2:

Ծավալը՝ 2 տպագրական մամուլ:
Տպաքանակը՝ 2000, գինը՝ 100 դրամ:
Ստորագրված է տպագրության 14.01.2014թ.:

ՌՈՄԻԿ ՍԱՐԴԱՐՅԱՆ. ծնվել է 1945թ. Կապան քաղաքում: Միջնակարգ եւ բարձրագույն կրթություն ստացել է Երեւանում: Մասնակցել է Կապանի առաջին ինքնապաշտպանական ջոկատների կազմակերպմանն ու ամրապնդմանը: ՀՀ ժուռնալիստների միության եւ գրողների միության վարչության անդամ է: Հեղինակել է շուրջ մեկ տասնյակ գիրք:Աշխատում է Հայաստանի գրողների միության հրատարակչությունում՝ գլխավոր խմբագիր:

«Հրո երկիր» շարքից

Հիմն Կապանին

¶ñ³Ï³Ý êÛáõÝÇù

Իմ Յոթնաբե՛րդ Կապան,
Իմ Յոթնադո՛ւռ Երկիր,
-Դո՛ւ,աչքիս բիբն արած
Մեծ կանգառիս Խարիսխ՝
Հոգուս մատույց հաւատ
Իմ հուշերի դապան...

Իմ Յոթնաբե՛րդ Կապան,
Իմ Յոթնադո՛ւռ Երկիր,
Դավիթ-Բեկի ձեռամբ,
Զեռամբ-Նժդեհի մեծ-
Դո՛ւ, Խուստուփ լե՛ռ դրած
Ոսոխների մուրքին-
Որպես ծանր կապանք...

Պղնձաձո՛ւյլ շեփոր
Իմ մանկության,
Ի՛մ ֆիդայի,-
Կերպո՛վ իմ արցունքի
Հոսող-Վաչագան գե՛ր,
Դո՛ւ, խոյացո՛ղ
Խուստուփ-Լեռնակոթո՛ղ -
Աչքով արծվենի՛

Մնչո՛ւմ եք միշտ իմ մեջ,
Ապրո՛ւմ եմ ես ձեզ հետ:

Օ՜,Հրո երկիր
Քաջ կապանցոց,
Դառնամ, քեզ կրկին փառաբանեմ
Բոց-բարձունքներից իմ կարոտի՝
- Զվարթությունը մեր իմաստուն,
- Մեր կորուստները-ցավ ու վշտեր,
- Գայլավաշտերիդ ոգին արթուն...

Ապա, լռեմ՝
Լեռների նման իմ հրաշեկ:

...Խառնվե՛մ ձեր հուր երակներին:

Իմ Յոթնաբե՛րդ Կապան,
Իմ Յոթնադո՛ւռ Երկիր:

ՌՈՄԻԿ ՍԱՐԴԱՐՅԱՆ